Գագիկ Ծառուկյանն իմ լավագույն ընկերներից է, ես 14 տարի ֆիզկուլտինստիտուտի ռեկտոր եմ եղել: Մտել է իմ ղեկավարած ինստիտուտ, ուսանողներն ասել են՝ պարոն Ծառուկյան, ինստիտուտը չունի ավտոմեքենա, որ գնանք պրակտիկայի, 3 օր անց ինստիտուտին մեքենա է նվիրել, ու մինչեւ հիմա այդ մեքենան ծառայում է բոլորին:

Կարդացեք՝ էջ 4

Ազգությամբ ադրբեջանցի, ՌԴ քաղաքացի Վագիֆ Գուսեինովի նկատմամբ Հայաստանում քրեական վարույթ է հարուցվել՝ խոշոր չափերի թմրանյութ ձեռք բերելու եւ ապօրինի պահելու համար: Նրան ապրիլի 5-ին ձերբակալել են, նա ընդունել է մեղքը: 1 ամիս 27 օր կալանք է կրել, ապա դատարանը նրան ազատել է կալանքից ու բաց թողել:

Կարդացեք՝ էջ 6

Եթե այդ խաղաղության գինը պետք է լինի հայկական ինքնության, պետության, հայ ժողովրդի կորուստը, ապա դա խաղաղություն չէ, բնաջնջում է: Եթե մենք մեր հայրենիքն ենք կորցրել, ամեն օր կորցնում ենք մեր մշակութային ժառանգությունը, Ադրբեջանը վերացնում է հայկական հետքը, ինչ խաղաղության մասին կարող է խոսք լինել:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 118 (4253), 16 հուլիս, հինգշաբթի, 2026

www.hraparak.am

Ընտրությունների թանաքը դեռ չչորացած՝ իշխանությունը նախապատրաստվում է աշնանը սպասվող ՏԻՄ ընտրություններին: Թեկնածուների փնտրտուքը սկսված է. ոմանք արդեն քարոզարշավ են իրականացնում, առաջիկա շաբաթներին կակտիվանան տարածքային շտաբները: Սյունիքի 3 խոշոր համայնքներում է ընտրություն լինելու՝ Գորիսում, որին միանալու են Տեղ եւ Տաթեւ համայնքները, Կապանում, Մեղրիում: Մեղրիում թեկնածուն կարծես հայտնի է՝ Սամվել Բաբայանի նախկին թիմակից, ՔՊ արտագաղթած գործող համայնքապետ Խաչատուր Անդրեասյանն է, որը համայնքապետարանի էջով քարոզարշավ է իրականացնում: Բոլոր գրառումները սկսվում են՝ «համայնքապետ Խաչիկ Անդրեասյանի նախաձեռնությամբ»: Թեպետ չեն բացառում, որ լավ թեկնածու գտնելու դեպքում ՔՊ-ն հրաժարվի նրանից, քանի որ Անդրեասյանը, ասում են՝ ջերմ հարաբերություններ ունի նախկին քաղաքապետ, երբեմնի ընդդիմադիր Մխիթար Զաքարյանի հետ, որն այս ընտրություններում, ըստ լուրերի, ՔՊ-ին չի աջակցել, ընտանիքն աշխատել է Կարապետյանի համար: Գորիսի հարցում էլ չկա վերջնական որոշում. չնայած Առուշին դեմ չեն, բայց ուզում են նրան վերահսկող թեկնածու էլ առաջադրել՝ մաքուր ՔՊ-ական: Հավակնություններ ունի Տեղի համայնքապետ Դավիթ Ղուլունցը: Կապանում դեռ անորոշություն է: Հնարավոր է բոլոր համայնքներում Գյումրու օրինակով փրայմերիզ անեն՝ իբր հասարակությունն է որոշում ՔՊ թեկնածուներին:

«Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորները շարունակում են ինքնաբացարկի դիմումներ ներկայացնել: Նախօրեին ներկայացրեց Արթուր Դանիելյանը՝ արդարադատության նախկին նախարար Գեւորգ Դանիելյանի որդին, որն ԱԺ անցած 29 թեկնածուներից մեկն է: Մեզ վստահեցրին, որ որոշումն անձնական է, գաղափարական տարաձայնություններ չկան, նա կողմ է մանդատները վերցնելուն: Մեր տեղեկություններով, վերջնական որոշում չունեն ցուցակի 3-րդ համար Գոհար Մելոյանն ու Լիլիա Շուշանյանը: Մելոյանը հանգստի է մեկնել, ասում են՝ գալուն պես դիմում կներկայացնի, նրա որոշումն էլ է անձնական, ասում են՝ փաստաբան ամուսինն է դեմ: Ինչպես մանդատների, այնպես էլ ԱԺ ղեկավար պաշտոնների հարցում «Ուժեղ Հայաստանում» միակարծություն չկա՝ ոմանք կողմ են հանձնաժողովների նախագահների եւ փոխխոսնակի պաշտոնները վերցնելուն: Ոմանք դեմ են՝ փաստարկելով, որ այդ պաշտոնները որեւէ առավելություն չեն տալիս: Իսկ եթե անգամ հանձնաժողովների նախագահությունը վերցնում են, ԱԺ փոխխոսնակինը չպետք է վերցնեն:

Խլոցի-քցոցի

Տնտեսության մոնիտորինգ անող ընկերության ղեկավարն ինձ երկար բացատրում էր, թե ինչպես է Նիկոլ Փաշինյանն իր կառավարման 8-րդ տարում ձեռնամուխ եղել կապիտալի վերաբաշխմանը: Դրա միայն մի փոքր հատվածն է տեսանելի մեզ՝ շարքային քաղաքացիներիս: Օրինակ, Գագիկ Ծառուկյանի ունեցվածքը խլելու վերջին պրոցեսը, որի շրջանակներում երեկ հայտարարեցին, որ «Մուլտի Վելնեսի» Մանուկյան 11 հասցեում գտնվող գույքը «վերադարձվել է Երեւանին»: «Երեւան» եւ «վերադարձնել» բառերը, իհարկե, կիսագրագետ, բոլշեւիկյան գաղափարներ կրող անապահով զանգվածի համար են, որն ուրախանում է, երբ մեծահարուստների ունեցվածքը խլում են: Նրանց մի մասին թվում է, թե դրանից մի կտոր իրեն է բաժին հասնելու, մյուս մասն ուղղակի ատում է իրենից լավ ապրող ցանկացածին եւ յուրաքանչյուր ունեցվածք համարում է թալանի արդյունք. այդպես են նրան ներշնչել ՔՊ-ի հեղափոխականները: Մարդու ունեցվածքը՝ սեփականությունը խլելու մեկ այլ օրինակ էլ ՀԷՑ-ի «պետականացումն» էր, որը վերցրին Սամվել Կարապետյանից եւ առայսօր որեւէ փոխհատուցում չեն վճարել, իսկ ՀԷՑ-ի նախկին տնօրեն Դավիթ Ղազինյանին էլ ընտրակաշառքի մեղադրանքով կալանավորել են, չնայած մեղադրանքը կառուցված է ինչ-որ կանանց խոսակցության գաղտնալսման վրա, իսկ այդ կանանց Ղազինյանը չի ճանաչում, երբեւէ չի տեսել: Ունեցվածքը մի խմբից խլելու եւ այլ խմբի վերաբաշխելու գործընթաց է նաեւ ապօրինի գույքի բռնագրավման գործընթացը՝ այդքան քննադատված եւ հակասահմանադրական օրենքի հիման վրա, որտեղ ոչ թե պետությունն է ապացուցում, որ մարդը գողություն է արել, այլ անձն է ապացուցում իր գույքի օրինականությունը: Չնայած այստեղ էլ իշխանությունը մեծ հաջողություններ չունի: Մի խոսքով, որտեղ մատդ դնում ես, անօրինականություն է եւ «բեսպրեդել»:

ԱՄՆ պետդեպարտամենտը երեկ հաստատել է The Guardian-ի հրապարակած լուրը, ըստ որի՝ ԹՐԻՓՓ նախագծի իրականացման նպատակով ստեղծված հիմնադրամը ղեկավարելու է Կոնստանտին Սոկոլովը, որը «ՄՏՍ Հայաստան» ընկերության նոր սեփականատերերից է՝ չինացի Ժե Ժանգի հետ միասին, որոնք մասնագիտացել են ընկերություններ գնելու, վաճառելու, նման գործարքներ կնքելու հարցերում, ինչպես նաեւ՝ մեծ ընկերությունների հմուտ կառավարիչներ են: Սոկոլովը Դոնալդ Թրամփի վաղեմի սպոնսորներից է, մասնավորապես՝ 12 միլիոն դոլար ներդրում է կատարել Թրամփի նախընտրական կամպանիայի մեջ: Նա մի շարք ներդրումային ֆոնդերի հիմնադիր է, տարբեր ընկերություններում ղեկավար պաշտոններ է զբաղեցրել: Բայց ամենազավեշտալին այն է, որ նա 1975 թվականին է ծնվել, Սանկտ Պետերբուրգում, ազգությամբ հրեա է, 2024 թվականին հանդիպել է Նիկոլ Փաշինյանի հետ:

ԱՐԴԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԻՄԻՏԱՑԻԱ՝ ՔՊ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Չնայած ՔՊ-ում խուլ դժգոհություն կա, որ ԱԺ հանձնաժողովների նախագահների թեկնածուներին ընտրում է ոչ թե ԱԺ ՔՊ խմբակցությունը, ինչպես եղել է առաջ, այլ՝ վարչությունը, ինչը նշանակում է, որ ընտրությունը ձեւական է՝ Փաշինյանի հրահանգն են դակում, բայց «ուսապարկերը» համաձայնել են ժողովրդավարության իմիտացիա ստեղծել եւ թեկնածություններ առաջադրել: ՔՊ-ում կարծում են, որ պաշտպանության հանձնաժողովի նախագահի առաջադրված 4 թեկնածուներից Սասուն Միքայելյանն է անցնելու՝ Փաշինյանը նրան բերում է իր ձեռքի տակ, որ հարկ եղած դեպքում մի sms-ով ազատվի նրանից: Իսկ կրթության, գիտության հանձնաժողովը եթե ընդդիմությանը չանցնի, ապա սորոսական Թագուհի Ղազարյանին կընտրեն, թեպետ նա 2 մրցակից ունի՝ գործող նախագահ Սիսակ Գաբրիելյանն ու Կոջոյանի դպրոցի տնօրեն Ռուզաննա Երեմյանը: Իսկ տարածքային հանձնաժողովը կտան ոչ թե Գարիկ Սարգսյանին, այլ Փաշինյանի քավորեղբայր Վահե Ղալումյանին: Ինտրիգը թերեւս առողջապահության հանձնաժողովն է: Հայտ են ներկայացրել Լուսինե Բաղալյանը՝ Լուլուն, վարչության անդամ Ալխաս Ղազարյանը եւ Տրդատ Սարգսյանը, որն ամիսներ առաջ Վանիկ Օհանյանի հետ պայքարում էր այդ պաշտոնի համար, բայց պարտվեց: Տրդատն էլ թեեւ Սուրեն Պապիկյանի սանիկն է, նա է փորձում սանիկին օգնել, բայց մեկը լինի, իր համար բարեխոսի՝ իր գործերն էլ լավ չեն: Ասում են՝ եթե Տրդատը հաղթի, հնարավոր է այս հանձնաժողովը հանձնեն ընդդիմությանը:

ԿԱՐԾԻՔ

ԻՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՑ ԱՎԵԼԻ «ԻՐԱՆՑԻ» ՀՀ ՔՆՆԻՉՆԵՐԸ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Գագիկ Ծառուկյանի ձեռնարկություններում իրականացված լայնածավալ խուզարկություններից հետո Հայաստանում սոցիալական ճգնաժամ է հասունանում: «Մուլտի գրուպ» հոլդինգի աշխատողները հերթով բողոքի ակցիաների են դուրս գալիս ու պահանջում, որ բացեն իրենց փակված աշխատավայրերը: Մի քանի օր առաջ փողոց էին դուրս եկել «Մուլտի Վելնես» համալիրի աշխատողները, «Մուլտի ռեստ հաուզի», «Մուլտի տաբակի», «Մուլտի ստոունի»:

«Մուլտի տաբակի» աշխատողներն ասում էին, որ 9 օր է՝ զրկված են աշխատելու հնարավորությունից: Մարդիկ ունեն վարկեր, ապրուստ վաստակելու խնդիր: «Եթե գործարանը չբացեցին, ամեն ինչի ընդունակ ենք»,- «Հրապարակին» ասել էր աշխատողներից մեկը: Ակցիաներ էին անում նաեւ Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատի, «Փարավոն» ռեստորանի, Օլիմպավանի աշխատողները, իսկ «Մուլտի Վելնես»-ի ակցիային միացել էին նաեւ սրահում մարզվողները: Իրավապահները կապարակնքել են ոչ միայն բիզնես օբյեկտների, այլ նաեւ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի դռները:

Այն, ինչ կատարվում է «Մուլտիգրուպ հոլդինգի» շուրջ, դուրս է եկել սովորական քննչական գործողությունների շրջանակից: Հարվածի տակ են հազարավոր շարքային քաղաքացիներ, հաճախորդներ, զբոսաշրջիկներ, որոնք, մեծ հաշվով, կապ չունեն Ծառուկյանի հետ, սակայն տուժում են նրա դեմ իրականացվող քաղաքական հաշվեհարդարից: Նրանց տագնապը լավագույնս արտահայտեց «Փարավոն» ռեստորանից ավտոմատավոր ջոկատայինների կողմից դուրս շպրտված նորահարսը, որը փեսայի հետ ֆոտոսեսիա էր անում «Փարավոնում». «Մենք ամիսներով պատրաստվել ենք այս օրվան, հսկայական գումարներ վճարել տարածքի համար: Մեր կյանքի ամենակարեւոր օրն է, մենք ինչ կապ ունենք ձեր քաղաքական կամ քրեական հարցերի հետ: Ինչու՞ եք հարսանիքս տապալում, ինչու՞ եք մեզ պատժում ուրիշի արածի կամ չարածի համար»:

Ուրիշի՝ Ծառուկյանի արած-չարածի համար պատժվում են նաեւ «Մուլտի Վելնես» կենտրոնի հաճախորդները, որոնք թանկարժեք փաթեթներ են գնել՝ այստեղ հաճախելու համար, բայց հուլիսյան մի գեղեցիկ օր եկել տեսել են դռները «պլոմբած», բակում՝ ավտոմատավորներ: Տարեկան (All Inclusive) փաթեթն արժե 400 հազար դրամ: «Եթե Ծառուկյանի հետ հարցեր ունեք, գնացեք՝ իր հետ լուծեք, իմ վճարած փողն ու իմ առողջությունն ինչու՞ եք պատանդ վերցնում», «Մենք ապրում ենք մի երկրում, որտեղ սովորական մարդու իրավունքը ոչ մի արժեք չունի, սա ի՞նչ խայտառակություն է»,- հարցնում ու զայրանում էին մարզասրահներից դուրս շպրտված հաճախորդները: Ոմանց նույնիսկ լողավազանից էին հանել: Երեւի, ջրի տակն էին խուզարկում:

Օլիմպավանից դուրս շպրտվածների թվում մոտ 30 երեխա կար՝ աուտիզմ եւ հենաշարժողական խնդիրներ ունեցող: Ասում են՝ իրենց ամենօրյա բուժական ֆիզկուլտուրայի վայրում տեսնելով ավտոմատավորների, նրանք սարսափ են ապրել, իսկ նրանց ծնողները՝ շոկ: Սպորտսմենների մարզիչներն իրենց հերթին են ահազանգում՝ միայն մեկ խմբում 107 երեխա զրկվել է մարզվելու հնարավորությունից, իսկ առջեւում աշխարհի առաջնությունն է: Այսպես է սիրում իր քաղաքացիներին ամեն օր «սրտիկներ» ցույց տվող իշխանությունը:

Բայց ինչո՞վ է «օգնելու» շարքային քաղաքացու նկատմամբ իրականացվող այս տեռորը Ծառուկյանի դեմ հարուցված քրեական վարույթին: Հիշեցնենք. նրան մեղադրում են առանձնապես խոշոր չափերով խարդախության եւ փողերի լվացման մեջ: Ըստ մեղադրանքի՝ նա 2022-2024 թվականներին, Իրան-Հայաստան կապերը զարգացնելու պատրվակով, համատեղ ընկերություններ է հիմնել, ապա փաստաթղթեր կեղծելով՝ իրանական կողմից հափշտակել 52 միավոր տրանսպորտ, տեխնիկա եւ ապրանքներ՝ շուրջ 22 միլիոն դոլարի: Իրանցի գործարարները, որոնց թվում են հայր եւ որդի Օլամաեիները, ցուցմունք են տվել, որ իրենց կողմից Հայաստան ուղարկված ապրանքները Ծառուկյանը յուրացրել է: Ծառուկյանի փաստաբանները փաստաթղթեր են ներկայացնում, որոնցով մի բան էլ իրանցիներն են պարտք Գագիկ Ծառուկյանին, եւ մեջբերում են Իրանի դատարանի վճիռը:

Իրանի դատարանն ընդդեմ Ծառուկյանի բերված հայցը մերժել է՝ վեճը համարելով քաղաքացիաիրավական: Ուրեմն Իրանի դատավորից ավելի «իրանցի՞» են գտնվել ՀՀ քննիչները: Անգամ՝ Իրանի դեսպանից էլ «իրանցի», որն իր ասուլիսում անդրադարձել է այս միջադեպին: «Երբ որեւէ իրադարձության ազդեցության տակ երկրի ներսում որոշակի պառակտում է ստեղծվում, ապա դա երբեք չի կարող բերել լավ արդյունքի»,- ասել է նա, եւ դեսպանի այս արտահայտությունը չի կորել դիվանագիտական ձեւակերպումներում:

Հետաքրքիր է, որ դեռ 2023 թվականին են իրանցիները բողոքել Փաշինյանին, բայց դատախազությունը դա միայն հիմա է հիշել՝ Ծառուկյանի հասցեին Նիկոլի հնչեցրած սպառնալիքներից հետո: Արդյո՞ք քննիչները չէին կատարի իրենց աշխատանքը, եթե մարզիկները շարունակեին մարզվել, իսկ Ծառուկյանի հոլդինգի աշխատողները՝ գնալ աշխատանքի, եւ ո՞րն է առյուծների ու կոկորդիլոսների մեղքը, որոնք «էկզոտիկ» այս վարույթի շրջանակում՝ քննիչների որոշմամբ պաշտոնապես ճանաչվել են «իրեղեն ապացույց»:

«Կենդանին դարձել է թիրախ: Ամեն ինչ մեկ է իշխանության համար: Չարաշահում են մինչեւ վերջ, որքան կարող են: Այն, ինչ կատարվում է, օրինականության հետ կապ չունի: Լավ, մեղադրանք ես առաջադրել, քրեական գործ եք հարուցել, զբաղվեք դրանով, ի՞նչ կապ ունեն հասարակ քաղաքացիները: Ծառուկյանի դեմ բռնանում են, բայց այս պառակտված հասարակությունը սկսում է պաշտպանել բռնացողին՝ հիշելով Ծառուկյանի ինչ-ինչ հատկանիշները: Իրոք, ինչ ուզում են, անում են»,- ասում է իրավապաշտպան **Ժաննա Ալեքսանյանը**:

ԿՃՈՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՇՐՋԱԴԱՐՁ



Նյութերը՝
Աննա ՊԱՊԻԿՅԱՆԻ

«Հրապարակ»-ի տեղեկություններով՝ իշխանության սրտի դատավորներից մեկը՝ Հակակոռուպցիոն քաղաքացիական դատարանի դատավոր Կարապետ Բադալյանը (ազգագրագետ Հրանուշ Խառատյանի փեսան), որը քննում էր Վեհափառին դավաճանած Նավասարդ Կճոյանի վերաբերյալ գործը, մոտ մեկ ամիս առաջ ինքնաբացարկ է ներկայացրել, եւ այս գործը վերամակագրվել է նույն դատարանի դատավոր Նարինե Ավագյանին: Հակակոռուպցիոն դատարանից հաստատեցին մեր տեղեկությունը, սակայն չնշեցին, թե ինչ պատճառով է հայտնի դատավորն ինքնաբացարկ ներկայացրել: Ի դեպ, մենք նաեւ տեղեկացանք, որ բարձրաստիճան հոգեւորականը դիմել է Դատական դեպարտամենտ, որպեսզի «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում այս քաղգործի վերաբերյալ ինֆորմացիան սահմանափակվի:

Քաղաքացիական հայցը Գլխավոր դատախազությունը Կճոյանի դեմ ներկայացրել էր 2025 թվականի սեպտեմբերին, երբ հարկավոր էր նրան ներգրավել Մայր Աթոռի եւ Վեհափառի դեմ սկսված արշավին: Եվ ոմանք այս հայցը դիտարկում էին որպես շանտաժ, որի արդյունքում էլ Գարեգին Բ-ի ամենամերձավոր հոգեւորականներից մեկը դավաճանեց նրան եւ անցավ Նիկոլ Փաշինյանի կողմը: Հայցը կապված էր հողամասերի կառուցապատման իրավունքի իրավաչափության հետ: Սա այն սուրն է, որը Կճոյանի գլխին կախված են պահում:

Հիշեցնենք, որ անցյալում բարձրաստիճան հոգեւորականը քրեական սկանդալների մշտական հերոսներից էր՝ դեռ նախկին իշխանությունների ժամանակ հարուցված օֆշորային սկանդալի գլխավոր գործող անձանցից: Նա 2020 թվականին այդ գործով հարցաքննության է հրավիրվել Ազգային անվտանգության ծառայություն եւ ցուցմունք տվել օֆշորի գործով: Իսկ 2020 թ. ապրիլի 13-ին նրան կանչել են ԱԱԾ ու մեղադրանք առաջադրել Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասերով՝ առանձնապես խոշոր չափով խարդախություն եւ փողերի լվացում: Որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրությունը: Բայց հանկարծ 2021 թվականի դեկտեմբերի 17-ին որոշում է կայացվել՝ նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու եւ նրա նկատմամբ կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը՝ որպես խափանման միջոց, վերացնելու մասին, քանի որ նախաքննության մարմինը նրա արարքներում հանցակազմ չի տեսել:

Հետո վերադաս դատախազը 2023 թվականի հուլիսի 11-ին քննիչի կողմից 2021 թ. դեկտեմբերի 17-ին կայացված որոշումը վերացրել է՝ դրա «վաղաժամ եւ անհիմն» լինելու պատճառաբանությամբ: Այսինքն, նա կրկին դարձել է մեղադրյալ, եւ, ըստ տեղեկությունների, Կճոյանը երկար չի մնացել մեղադրյալի կարգավիճակում. քրգործը կարճվել է:

Նավասարդ Կճոյանի նկատմամբ անցյալում նաեւ ապօրինի հարստացման հայցեր են ներկայացվել: Սակայն Հակակոռուպցիոն դատարանը մերժել է դատախազության հայցերը:

600 հազար մարդ Փաշինյանին դատի տար՝ պատկերը կփոխվեր

««Քաղաքացիական պայմանագիրը» ստացել է 100 տոկոսով օրգանիկ քվե, իսկ մյուս քաղաքական ուժերը՝ 100 տոկոսով ընտրակաշառքով քվե»: Նիկոլ Փաշինյանի այս հայտարարությունից հետո փաստաբան **Լուսինե Ավագյանը**, որն ընդդիմությանն է ընտրել, նրան դատի է տվել՝ պահանջելով հրապարակային հերքում եւ 5 մլն դրամ փոխհատուցում՝ զրպարտության ու վիրավորանքի համար: Նա մեզ հետ զրույցում նշեց. «Ես կարծում եմ, որ բազմաթիվ մարդիկ են այդ հայցի տակ, եթե նույնիսկ չեն ստորագրել: Կոնկրետ ես «Հայաստան» դաշինքին եմ ձայն տվել, բայց բազմաթիվ կուսակցությունների կտայի՝ թե՛ «Բարգավաճ Հայաստանին», թե՛ «Ուժեղ Հայաստանին», թե՛ Մարության Հայկին եւ այլն: Ուզում էի ձեռնարկել գործողություններ, որ համահայցվորներով լիներ, բայց մեր հասարակությանն ավելի լավ դուք եք տեղյակ՝ ամեն մեկը մի պատճառ ունի՝ հայցով հանդես չգալու»: Փաշինյանն ավելի ուշ խմբագրել է իր խոսքը՝ նշելով, որ «70 տոկոսն է ընտրակաշառքով քվեարկել ընդդիմության օգտին»: «Այն, որ ինքը փոփոխել է, ես դա չեմ տեսել, եթե նույնիսկ ասել է 70 տոկոս եւ ներողություն չի խնդրել մնացած 30 տոկոսից, հերքում չի տվել մնացած 30 տոկոսի մասով, իրավիճակը դրանից չի փոխվում»: Իսկ ի՞նչ սպասելիք ունեք դատարանից: «Դատարանից յուրաքանչյուր տիպի սպասելիք կարող ենք ունենալ: Տեսեք՝ վճռաբեկ դատարանն ինչ պրիյոմներ է կիրառել հենց Նիկոլ Փաշինյանի մասով: Ընդ որում, այդ որոշումները վերաբերում են նրան, որ հայցերը բավարարվել են՝ վճռաբեկով նրանց ճակատագրերն այլ կերպ են լուծվել, բայց դա չի նշանակում, որ դատարան չպետք էր դիմել: Եթե առնվազն 600 հազար քաղաքացի դատարան դիմեին, պատկերը ոչ միայն էական կլիներ, այլ նաեւ կփոխվեր: Ես ի սկզբանե հաղորդում եմ ներկայացրել, կարծում եմ՝ այստեղ կան սուտ մատնության տարրեր, դատախազությունն ընթացք չի տվել, գտել է, որ հանցավոր տարրեր չկան այստեղ»:

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ԿԱՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԵՏԱԳԱ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԻՏՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՆ

*«Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու **Էդգար Ղազարյանը** վստահեցնում է, որ դաշինքում չեն քննարկել՝ զբաղեցնելո՞ւ են ԱԺ ղեկավար պաշտոնները, թե՝ ոչ:*

Խոսքն ԱԺ հանձնաժողովների նախագահների եւ ԱԺ փոխխոսնակի պաշտոնների մասին է: Դոնթի բանաձեւով՝ ամենամեծ ընդդիմադիր խմբակցությանը հանձնաժողովի 3 նախագահի, 1՝ փոխնախագահի պաշտոն է հասնում: Իր անձնական կարծիքը հայտնելու հարցում Ղազարյանը կաշկանդված է, ինքն այժմ անհատ չէ, դաշինք է ներկայացնում, անձնական կարծիք հայտնում է միայն ներքին քննարկումների ժամանակ, երբ որոշում կայացվի՝ իր կարծիքը կլինի դրան համապատասխան:

- Պատգամավորական մանդատները վերցնելու որոշումից չի՞ բխում, որ պետք է նաեւ ղեկավար պաշտոնները ստանձնեք, որովհետեւ եթե գնում եք խորհրդարան, ապա պետք է բոլոր գործիքներն օգտագործեք:

- Ինչո՞վ է դա աշխատանքային գործիք: ԱԺ-ում հանձնաժողովների նախագահների եւ անդամների լիազորությունները գրեթե նույնն են, հանձնաժողովներն ընդամենը նիստերը հրավիրում եւ նախագահում են, ո՛չ քննարկումների ժամանակ, ո՛չ ձայնի իրավունքի ժամանակ... Մեզ մոտ մի տեսակ ընկալումներ կան ԱԺ ղեկավար պաշտոնների նկատմամբ՝ ԱԺ նախագահը շարունակում է մնալ ԱԺ պատգամավոր, ինքը մյուսներից տարբերվում է նրանով, որ նիստերի ժամանակ ծառայություններ է մատուցում պատգամավորներին: Այսինքն՝ ինքը ոչ մի արտոնություն չունեցող պաշտոնյա է, ԱԺ նախագահը կամ տեղակալը ֆունկցիոնալ իմաստով ԱԺ պատգամավորներից չեն տարբերվում, հետեւաբար, այդ պաշտոններին այդքան կարեւորություն տալը, կարծում եմ... պիտի նայել՝ քաղաքականապես ինչքանով է նպատակահարմար գլխավոր խնդիրների համատեքստում: Պետք է քննարկենք, մենք ՔՊ չենք, էլի, որ ժամանակից առաջ որոշումներ կայացնենք: Դեռ չի որոշվել, թե քանի մշտական հանձնաժողով է ձեւավորվել, բայց ՔՊ-ն արդեն վարչության նիստեր է անում՝ ասելով, որ 12 հանձնաժողովների համար առաջադրումներ են սկսել: Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ դրանց մտածողությունը, օրինականությունը, բայց ի՞նչ գիտեն, որ 12 հանձնաժողով է: «ԱԺ կանոնակարգ» օրենքով ասվում է՝ մինչեւ 12 հանձնաժողով, բայց ԱԺ-ն կարող է որոշել, որ ձեւավորվում է 8 հանձնաժողով:

- Իրենք մեծամասնություն են, ինչ կուզեն, կորոշեն՝ 8, 10, թե 12, գուցե 12-ի մասին որոշում են ընդունել:

- Իրենք իրենց որոշումները պիտի հիմնավորեն, չէ՞, իրենք ո՞վ են, իրենք ի՞նչ են՝ ընդամենը հանրային ծառայող են: Պիտի քննարկում ունենանք՝ քանի հանձնաժողով է պետք ստեղծել, իրենք իրենց եսիմում տեղն են դրել, ամեն ինչը իրենք: Ի դեպ, նկատե՞լ եք՝ իրենց մասին խոսելիս միշտ կոլեկտիվ է ձեւակերպումը՝ իրանք սենց են, իրանք որոշել են. անհատներ չկան, էլի, խումբ է, ոհմակ է, երամակ ...

- Ես ճի՞շտ հասկացա, որ ղեկավար պաշտոնները չվերցնելու տրամադրություններ կան:

- Ես չեմ կարող ասել՝ ինչու նման եզրակացության եկաք, ես Ձեզ պատասխանեցի, որ այդ հարցը մեզ մոտ չի քննարկվել, ու որոշում չկա:

- Շաբաթներ առաջ Սամվել Կարապետյանը հայտարարեց, որ ընդդիմությանը համախմբող հարթակ է ստեղծում, ավելի ուշ ասաց՝ իշխանափոխության գաղտնի պլան ունեք, անգամ կատակեց, թե Ալեն Սիմոնյանի գահընկեցությունն էլ այդ պլանի շրջանակներում էր: Ի՞նչ կարող եք ասել այդ պլանի եւ համախմբման գործընթացի մասին:

- Բայց ինչո՞ւ եք մտածում, որ կատակեց...

- Կատա՞կ չէր:

- Չգիտեմ: Ինչ վերաբերում է պլանին, ապա գաղտնիի իմաստն այն է, որ գաղտնի մնա, եթե փակագծեր բացենք, դրա գաղտնին էլ ո՞րն է լինելու: Եթե անհրաժեշտություն լինի, պարոն Կարապետյանն իր հայտարարության մասին լրացուցիչ պարզաբանումներ կտա, ես այդ առումով բան չունեմ ասելու:

- Իսկ այդ պլանի իրագործման ճանապարհը ո՞րն է լինելու՝ այս պասիվությո՞ւնը, թե՞ փողոցային պայքարը:

- Նարեկ Կարապետյանը հստակ հայտարարել է, որ մենք առաջիկայում գործի ենք դնելու պայքարի բոլոր ձեւերը՝ ե՛ւ խորհրդարանական պայքարը, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ արտախորհրդարանական, պարոն Սամվել Կարապետյանի ասած՝ ընդդիմության համախմբումը հենց այդ համատեքստում պետք է լինի:

- Փողոցային պայքարը, այսինքն, չե՞ք բացառում:

- Ոչ, բայց դրա գործնական կիրառումը տեսնում ենք պատեհ առիթով, ոչ թե աննպատակ, ուղղակի 1-2 հավաք կազմակերպելու տեսքով, այլ այն, որ դա կունենա ֆունկցիոնալ նշանակություն, ազդեցություն հետեւյալ գործընթացների վրա: Առայժմ պայքարի առաջնագծում կմնա մեր խմբակցությունը՝ իր վրա վերցնելով պայքարի ողջ ծանրությունը, իսկ հետագա գործողությունները ցույց կտան, թե հանրության աջակցությունը որ փուլում կզգանք, ու այդ փուլում էլ կդիմենք հանրության աջակցությանը:

- Իսկ ի՞նչ է կատարվում ձեր թիմում, նորից ցուցակից ինքնաբացարկի դիմումներ կան...

- Ինքնաբացարկի դիմումները ՔՊ-ում են, մեզ մոտ ինքնաբացարկի դիմումներ ներկայացրել են միայն 90 համարից հետո, այսինքն՝ ոչ անցողիկ թեկնածուների շրջանում:

- Ձեր 29 անցողիկ թեկնածուներից մեկը՝ Արթուր Դանիելյանն էլ է երեկ բացարկ հայտնել:

- Հնարավոր է, դա կարող է լինել խիստ մասնավոր եւ պայմանավորված անձնական հանգամանքներով, որովհետեւ ցուցակում կարող են լինել տարբեր ծանրաբեռնվածություն ունեցող մարդիկ, որոնք նախընտրել են մնալ իրենց հիմիկվա աշխատանքի ծանրաբեռնվածության մեջ, որովհետեւ պատգամավորի աշխատանքն անհամատեղելի է այլ աշխատանքի հետ՝ բացի գիտական, մանկավարժական:

- Դուք ի՞լ էիք կողմ, որովհետեւ հատկապես Ձեր մասով կային շահարկումներ, տեսանյութեր էին պտտվում՝ ինչպես էիք նախկինում ընդդիմադիրներին հորդորում դուրս գալ խորհրդարանից, որ անիմաստ է մնալը: Ձեր այս որոշման վրա ի՞նչ գործոններ ազդեցին:

- Նախկին տեսանյութ ասվածը՝ կա 2021 թվականի մի տեսանյութ, որտեղ ես դրա մասին խոսել եմ, այդ ռիսկը մեր ներկայիս քննարկումների ժամանակ էլ ենք քննարկել, խոսքը վերաբերում էր պատգամավորների թվաքանակը 101-ից պակաս լինելու հանգամանքին: Ես 21-ին էլ էի ասում, հիմա էլ: Մեր Սահմանադրության մեջ գրված է, չէ՞, որ ԱԺ-ն պետք է կազմված լինի 101 պատգամավորից: Իմ հիմնական մոտեցումն այն է եղել, որ ոչ թե մանդատները չվերցնեն՝ խորհրդարան չգնան, այլ եղած մանդատները ռացիոնալ եւ ճիշտ օգտագործեն: Այո, մանդատներից հրաժարվելու տարբերակը նույնպես դիտարկել եմ, հիմա էլ եմ դիտարկում՝ այն տրամաբանությամբ, որ Սահմանադրությամբ ասվում է՝ պատգամավորների քանակը պետք է լինի 101-ից ոչ պակաս, Սահմանադրությունը ենթադրում է, որ ցանկացած պահի դա պետք է այդպես լինի, հիմա եթե ընդդիմությունն իր 41 պատգամավորից հրաժարվի, ԱԺ-ն կազմված կլինի 64 պատգամավորից, 64-ը 101-ից պակաս է, հետեւաբար, առաջանալու է սահմանադրական ճգնաժամ. ես ասում եմ՝ եթե այդ ճգնաժամն իրավական ճգնաժամ է լինելու եւ կարող է հանգեցնել արտահերթ ընտրության, ուրեմն միանշանակ պետք է հրաժարվել մանդատներից, բայց սահմանադրագետները մեզ ասում են, որ ԿԸՀ-ն հիմա՝ ամսի 21-ին մանդատները բաշխելու որոշումը կայացնելու է՝ 105 պատգամավոր է լինելու, ուրեմն ԱԺ-ն ձեւավորվելու է, դրանից հետո ով ինչ անհատական որոշում կայացնի, դա չի կարող ազդել:

- Ժամանակին իմպիչմենտի գործընթաց էիք նախաձեռնում, հորդորում էիք վայր դնել մանդատները՝ բոքսի տանձիկ չդառնալ...

- Այդ ձեւակերպումներն ինձ համար ընկալելի չեն, ես «բոքսի տանձիկ» եզրույթն իմ կյանքում երբեք չեմ օգտագործել, Նարեկ Մալյանը շատ եմ լսել, որ օգտագործած լինի, բայց ես չեմ օգտագործել:

- Իսկ երբ ցուցակում տեղ էին զբաղեցնում, չգիտե՞ին այդ մասին:

- Դե գիտեին, բայց հիմա էլ իրավունք ունեն նաեւ որոշումներ կայացնել:

- Արդյոք խոսքը քաղաքական, գաղափարական տարաձայնությունների մասին չէ՞, գուցե համաձայն չեն խորհրդարան գնալու թիմի որոշման հետ:

- Չկա նման բան, մեր թիմում գաղափարական տարակարծությունների խնդիր գոյություն չունի, եթե կան ինքնաբացարկի դիմումներ, դրանք՝ բոլորը, համաձայնեցված կամ կուսակցության որոշումներով հետագա պայքարին միտված որոշումներ են:

- Այսինքն, բոլորը կողմ էին մանդատները վերցնելուն:

- Այդ հարցով մեզ մոտ եղել են լայնամասշտաբ քննարկումներ, որոշումը կայացրել ենք ընտրություններից մոտ մեկ ամիս անց, այդ ընթացքում ե՛ւ ներքին, ե՛ւ հանրային, ե՛ւ մասնագիտական քննարկումներ ենք ունեցել քաղաքագետների, սահմանադրագետների հետ եւ բոլոր գործոնները հաշվի առնելով ենք այդ որոշումը կայացրել:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԻՆՉՊԵՍ ԱՊՈՐԻՆԻ ՓԱԿԵԼ ԵՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԹՈՂ ՎՆԱՍՆԵՐԸ ՀԱՏՈՒՅԵՆ

Շաբաթ օրը «Մուլտի Վելնես» սպորտային համալիրի աշխատակիցներն ու մարզվողները բողոքի ակցիա էին անում՝ համալիրի փակման կապակցությամբ: Նրանք հայտարարում էին, որ պետությունը խախտում է աշխատողների եւ մարզվողների իրավունքները: «Մարդիկ հարկադիր պարապուրդի են մատնվել: Մեր սեփականատեր Գագիկ Ծառուկյանը բազմաթիվ աշխատատեղեր է ստեղծում, իսկ պետությունը հարկադրաբար մարդկանց զրկում է աշխատանքից: Մեր աշխատանքային թիմում կային նաեւ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիներ, որոնց մեծամասնությունը վարձով է ապրում. հիմա նրանք օրվա հացի խնդիր ունեն: Մարդիկ կան, որ ունեն վարկեր, սակայն ոչ մեկը դրա մասին չի մտածում»,- ասել էր «Մուլտի Վելնես»-ի աշխատակիցներից մեկը:

«Մուլտի Վելնես» համալիրի գլխավոր տնօրեն Արման Փիրոյանը «Հրապարակի» հետ զրույցում հավելել էր, որ օրեցօր խնդիրները կուտակվում են: Նրա խոսքով՝ ներսում սարքավորումները միացված են մնացել եւ հսկողությունից դուրս: «Միջնորդություն եմ ներկայացրել քննչական մարմնին եւ սպասում եմ պատասխանի, քանի որ հրատապ լուծում է հարկավոր: Այս պահին բոլոր մուտքերը կապարակնքված են, ես կամ որեւէ այլ աշխատակից դեռ չենք հարցաքննվել: Մեզ մոտ համալիր ստուգումը սկսել էին, եւ ամեն ինչ նորմալ գնում էր: Մեզնից ինչ փաստաթղթեր ուզել են, ամբողջը ներկայացրել ենք: Տարել են համակարգիչներ, սերվերներ, նաեւ՝ իմ անձնական հեռախոսը: Գույքը տանելուց 2 օր անց հայտարարում են, թե հարկեր են թաքցվել, սակայն այդքան օրում նրանք չէին կարող ստուգել»,- նշում էր մեր զրուցակիցը:

Մեզ երեկ դիմել է «Մուլտի Վելնես» Lady Zone փաթեթից օգտվող մի կին եւ ասում էր, որ վճարել է 220 հազար դրամ, սակայն չի կարողանում օգտվել համալիրի ծառայություններից, եւ չկա որեւէ պատասխանատու, որ գումարը վերադարձնի իրեն. «Ու ինձ նման հազարավոր մարդիկ: Ես վճարել եմ 220 հազար դրամ՝ մեկ ամսվա համար, բայց այսօր չեմ կարողանում մարզասրահ գնալ, ոչ էլ իմ գումարը հետ ստանալ: Հեռախոսահամարներն անհասանելի են, պատասխանատուները լռում են, իսկ պետությունը ոչ մի քայլ չի անում»: Իրավապահների այս քայլերի տակ նաեւ թաքուն ծրագիր է նշմարվում՝ այնպես անել, որ մարդիկ դժգոհեն, ընդվզեն Ծառուկյանի դեմ, նրանից գումարներ պահանջեն, նրան մեղադրեն իրենց «քցելու» համար:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մանդատից հրաժարվելը Մելքումյանի անձնական գործն է, բայց ուրացողներին ոչ մեկը չի հարգում

*«Հրապարակի» զրուցակիցը ԲՀԿ-ական նախկին պատգամավոր **Վարդեւան Գրիգորյանն** է:*

- Գագիկ Ծառուկյանին գետնին տապալեցին, կալանավորեցին 2 ամսով: Իշխանության ատելությունն այնքան անթաքույց է նրա հանդեպ, որ անգամ վերջինիս պատկանող կենդանիներին առեւանգեցին, եւ առյուծներից մեկն անկեց՝ քնաբերի գերդոզավորման պատճառով: Ծառուկյանին պատկանող բիզնեսներն էլ արդեն քանի օր է՝ չեն գործում, տասնյակ հազարավոր մարդիկ պարապուրդի են մատնված ու թե ինչ ճակատագրի կարժանանան, հայտնի չէ: Փաշինյանը դեռ ընտրություններից առաջ էր խոստացել «կզացնել» ընդդիմադիր 3 առաջնորդներին:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Նախ ասեմ, որ Գագիկ Ծառուկյանն իմ լավագույն ընկերներից մեկն է, ես 2006 թվականից «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ եմ եւ մշտապես հարգել եմ իմ կուսակիցներին: Ասեմ, որ 4-5 անգամ ընտրվել եմ որպես ԱԺ պատգամավոր՝ թե՛ մեծամասնական, թե՛ համամասնական ցուցակներով: Ինձ համար սարսափելի ծանր էր այդ կադրերը նայելը, որովհետեւ Ծառուկյանն այն մարդն է, որն իրոք ամենաանհավանական դեպքերում անգամ ձեռք է մեկնել մեր հասարակության տարբեր շերտերին, նրանց, ովքեր ունեցել են աջակցության կարիք: Նա մշտապես եղել է սպորտի կողքին, արել է ամեն բան, որպեսզի հայ սպորտսմենները հավուր պատշաճի ներկայանան միջազգային արենաներում, խոսքը նաեւ մեծ սպորտի մասին է: Մենք երկար տարիներ միասին աշխատել ենք Օլիմպիական կոմիտեում, եւ մշտապես զարմացել եմ այդ մարդու պատրաստակամության վրա: Հայկական սպորտի վերածնունդը պայմանավորված է հենց Ծառուկյան Գագիկի աշխատանքով եւ մոտեցմամբ: Պատահականություն չէ, որ հայերը տարիներ շարունակ տարբեր սպորտաձեւերում բարձր արդյունքներ էին ցուցաբերում: Դա հենց այնպես, ինքն իրեն չէր լինում, սպորտը շատ թանկ հաճույք է, իսկ մեր երկիրը երբեք ինչպես հարկն է գումար չի հատկացրել սպորտին, որպեսզի մարզիկներն ինչպես հարկն է պատրաստվեին, բայց Գագիկ Ծառուկյանը միշտ ձեռք է մեկնել սպորտի ներկայացուցիչներին: Ես 14 տարի ֆիզկուլտինստիտուտի ռեկտոր եմ եղել: Մտել է իմ ղեկավարած ինստիտուտ, ուսանողներն ասել են՝ պարոն Ծառուկյան, ինստիտուտը չունի ավտոմեքենա, որ գնանք պրակտիկայի, երեք օր անց նա մեր ինստիտուտին մեքենա է նվիրել, ու մինչեւ հիմա ուսանողությունն այդ մեքենայով է գնում պրակտիկայի:

- Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցներն ասում են՝ թալանել է, թալանով է բիզնեսներ ստեղծել, այդքան գումարի տեր դարձել:

- Թալանով զբաղվել են այն մարդիկ, ովքեր երկար տարիներ պետական պաշտոններ են զբաղեցրել, մարդը, որ երբեք պետական պաշտոն չի զբաղեցրել, ինչ կարող էր թալան անել: 2015 թվականի հայտնի դեպքերը հիշեցի՝ նախորդ իշխանությունների հետ կապված: Ուրեմն նույն ձեւով մտան Ծառուկյանին պատկանող բոլոր հիմնարկներ, ստուգումներ իրականացրին եւ ոչ մի ապօրինի բան չգտան, հակառակ դեպքում մի 500 անգամ կհրապարակեին, եթե մի բան այն չլիներ, այն ժամանակ էլ իրավիճակը բավականին լարված էր: Եվ հետո պարբերաբար ստուգումներ եղել են նրան պատկանող բիզնեսներում, եւ ոչ մի անգամ ոչ մի օրենքի խախտում չի հայտնաբերվել, էդ ինչ եղավ, որ հիմա հանկարծ հայտնաբերվեց, ու պարզվեց, որ մարդը թալան է արել:

- Բայց, օրինակ, շատերն այսօր վախենում են Ծառուկյանին աջակցող գոնե մեկ նախադասություն ասել, նույն սպորտի ներկայացուցիչները, որոնց նա այդքան աջակցել է, անգամ՝ Միքայել Մելքումյանը....

- Գիտեք, ես չեմ կարող որեւէ մեկի փոխարեն բան ասել, բայց ապերախտությունը լավ բան չէ: Մանդատից հրաժարվելը Մելքումյանի անձնական գործն է, բայց ուրացող մարդկանց ոչ մեկը չի հարգում, նման մարդկանց չեն հարգում անգամ նրանք, ովքեր դեմ են Ծառուկյանին: Իրենք թող իմանան, որ մի օր էլ նույն բանը կարող է իրենց հետ տեղի ունենալ:

- Ձեր կարծիքով՝ ինչի՞ է ուզում հասնել Նիկոլ Փաշինյանն այս քայլերով:

- Ամեն ինչ պարզ է: Գագիկ Ծառուկյանի մասնակցությունն ԱԺ ընտրություններին, Ծառուկյանի ծրագրային մոտեցումը ձեռնոց նետեցին այս իշխանությանը:

Տաղավարներում քեֆ անելու հերթ է

Վաղամեռիկ մարդկանց հիշատակին նրանց հարազատները Տավուշի մարզի անտառներում հուշաղբյուրներ եւ դրանց կից զրուցարաններ, տաղավարներ են կառուցել՝ «բեսեդկաներ»: Այդ տաղավարներում հիմնարկներով, ընտանիքներով, ընկերներով, հարազատներով՝ հիմնականում շաբաթ, կիրակի օրերին, քեֆեր են անում՝ առանց տեղի համար վճարելու: Այնքան շատ է տաղավարներում քեֆ անել ցանկացողների քանակը, որ դրանք նախապես են «ամրագրում»՝ նախօրոք գնում են եւ տաղավարում թուղթ են փակցնում՝ վրան գրված, որ այսինչ օրը, այսինչ ժամերին տաղավարը զբաղեցված է լինելու, եւ զբաղեցնողի հեռախոսահամարն են անգամ նշում: Տավուշի մարզի բնակիչների զգալի մասը, իհարկե, դժվարությամբ է օրվա ապրուստը հոգում, մեծ թվով մարդիկ բանկերում չմարված վարկեր ունեն, սակայն բնակչության ինչոր խավ էլ քեֆ անելու համար միշտ փող ունի եւ տրամադրություն: Անտառի հուշաղբյուրներին կից տաղավարները հազվադեպ են ազատ լինում:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Փաշինյանը, այ, որ նորից սկսի օգտվել մեր ծառայություններից, տարբերությունը կզգա

2025 թվականի հունվարի 1-ից փաստաբանների հարկերը բարձրացրին: Տեւական բողոքները եւ անգամ ակցիաները ոչ մի դեր չխաղացին՝ իշխանությունն անդրդվելի մնաց, ինչի արդյունքում փաստաբանական ծառայությունները թանկացան, եւ հանրության մի զգալի հատված զրկվեց փաստաբանի դիմելու եւ դատարանում իրավական պաշտպանություն ունենալու իրավունքից: Այնպես որ, երբ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, թե արդարադատությունն ու արդարությունն էլիտաներին են հասու, դրանում միայն ինքն է մեղավոր՝ ոչ միայն դատական համակարգը չի կարողանում կարգի բերել, այլեւ այնպիսի հարկային քաղաքականություն է վարում, որ միայն հարուստ մարդիկ են կարողանում փաստաբանին դիմել եւ նրա ծառայությունների դիմաց վճարել:

25 թ. հունվարի 1-ից, անգամ եթե փաստաբանական ծառայություններն անվճար են մատուցվում, փաստաբանը չի ազատվում հարկերից: Եթե նախկինում նրանք գործում էին 5 տոկոս շրջանառության հարկի դաշտում, ապա արդեն մեկ տարի է՝ ավելացված արժեքի հարկման դաշտում են գործում, ինչի հետեւանքով փաստաբանական ծառայություններ մատուցողները 20 տոկոս են վճարում, գումարած շահութահարկը՝ 18 տոկոս: Փաստաբանների մի մասը, որոնց տարեկան շրջանառությունն անցնում է 119 միլիոն դրամը, վճարում են եւ ավելացված արժեքի հարկ, եւ շահութահարկ: Սրանից պակաս վաստակողները, որոնք մեծամասնություն են, վճարում էին ընդամենը 5 տոկոս շրջանառության հարկ: 2025-ի սկզբից բոլորը սկսեցին հարկվել նույն սկզբունքով, ինչը դեռեւս նախագծի քննարկման ժամանակ բողոքի ալիք բարձրացրեց փաստաբանների շրջանում, անգամ մեկօրյա գործադուլ արեցին: Փաստաբաններն ամիսներ շարունակ բարձրաձայնում էին, որ այլեւս չեն կարողանա անվճար կամ մատչելի ծառայություններ մատուցել: Արդյունքում նաեւ խիստ ծանրաբեռնվել է առանց այդ էլ գերծանրաբեռնված աշխատող Հանրային պաշտպանի գրասենյակը: Փաստաբանական ծառայությունների վարձավճարի բարձրացման ֆոնին անվճարունակ քաղաքացին դիմում է Հանրային պաշտպանի գրասենյակ՝ պետության հաշվին իրավաբանական օգնություն ստանալու: Ուշագրավ է, որ նախագծի մասին բացասական եզրակացություն էր ներկայացրել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, այնպես էլ արդարադատության նախարարությունը: Սակայն Փաշինյանի կառավարությունը շատ է սիրում հարկերը բարձրացնել, եւ այդպես էլ չփոխեցին իրենց մոտեցումը:

Ընդդիմությունը եւս դեմ էր նախագծին: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը մտահոգություն էր հայտնել, որ փաստաբանական գործունեության հարկման ներդրվող համակարգը ֆինանսական անհաղթահարելի պայմաններ կստեղծի, եւ բազմաթիվ քաղաքացիներ կզրկվեն իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից: Մեզ պարբերաբար դիմում են քաղաքացիներ եւ դժգոհում, որ փաստաբանական ծառայությունները բավականին թանկացել են, չեն կարողանում օգտվել փաստաբանի ծառայությունից:

Փաստաբան **Հայկ Ալումյանին** «Հրապարակը» հարցրեց՝ ինչ փոփոխություններ են նկատվում փաստաբանների աշխատանքում, ծառայությունների թանկացումից հետո փաստաբաններին դիմող քաղաքացիների թիվը նվազե՞լ է: Ալումյանը մեզ հետ զրույցում անդրադառնալով թեմային՝ նկատեց. «Բնականաբար, սա շատ վատ նախադեպ էր, որին ես բացասաբար եմ վերաբերվում: Բայց ասեմ, որ այս ամենից ավելի շատ տուժեցին մեր վստահորդները, որովհետեւ նրանք են վճարում այդ գումարը: Գնի մեջ ներառել ենք նաեւ հարկի գումարը, եւ իրենք են ստիպված վճարում: Նման իրավիճակ չի եղել, որ վստահորդներն ասեն՝ չենք կարողանում վճարել, մարդիկ վճարում են, սակայն այս նորամուծությունը սխալ էր, խփեցին փաստաբանական ծառայություններից օգտվող քաղաքացիների գրպանին: Եվ այս ամենից հետո էլ դեռ հայտարարում են, որ դատահիրավական համակարգը միայն էլիտաների համար է: Ես կանխատեսում եմ, որ շուտով հենց իշխանավորներն են սկսելու օգտվել մեր ծառայություններից, եւ երբ իրենք սկսեն օգտվել, կզգան իրենց վրա այդ տարբերությունը: 2009 թվականին Փաշինյանը շատ է օգտվել փաստաբանական ծառայություններից, այ, որ նորից սկսի օգտվել, տարբերությունը կզգա: Առաջ մեր շրջանառությունից հինգ տոկոս էինք վճարում, հիմա շրջանառության 40 տոկոսը հարկ ենք վճարում: Հարկերը մոտ 8 անգամ շատացել են, սակայն տպավորությունն այնպիսին է, որ մենք՝ փաստաբաններս, արդեն հարմարվել ենք այս ամենին, եւ ասեմ, որ միշտ չէ, որ մեր վստահորդները հարուստներ են»:

ԵԼՈՒԹ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԱՐԿՈ՞ՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՑ

Ռուսաստանի ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան սեր է խոստովանել Հայաստանին. «Մեր կողմից միշտ եղել են միայն օգնություն եւ աջակցություն, որը, իմ կարծիքով, կապված է եւ աշխարհաքաղաքական գործոնների հետ, ինչպես ասում են դիվանագետները, եւ այն բանի հետ, ինչը ես անվանում եմ սեր: Ժողովուրդների, մշակույթների անկեղծ սերը, փոխըմբռնումը՝ սրանք են իրական կապերը»: Նույն հարցազրույցում Զախարովան անդրադարձել է Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ տնտեսական կապերին, Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի նախագահի կողմից դրսեւորվող ջերմ վերաբերմունքին. «Ես նույնիսկ չեմ խոսում այն մասին, թե որքան շատ բան է անձամբ արել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը՝ արյունալի հակամարտությունները դադարեցնելու եւ դժվարին ժամանակներում օգնելու, ինչպես նաեւ Հայաստանի զարգացումն ապահովելու համար հնարավոր ամեն ինչ անելու համար: Իրականում, որքան շատ բան է ձեռք բերվել տնտեսության, էներգետիկայի, արդյունաբերության եւ այլնի առումով: Սա մեր մոտեցումն է, եւ մենք հետեւողական ենք դրան»:

Ի՞նչ է այս ամենը նշանակում, արդյո՞ք Ռուսաստանը որոշել է փոխել Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականությունը, որոշել է հրաժարվել Հայաստանի դեմ իրականացվող պատժամիջոցային քաղաքականությունից: Շատ հնարավոր է, որ Ռուսաստանում հասկացել են, որ նման քաղաքականությունը փակուղային է եւ չի կարող օգուտ բերել ոչ միայն Հայաստանին, այլեւ՝ Ռուսաստանին:

Նախօրեին ռուսական ՏԱՍՍ լրատվական գործակալությունն անդրադարձել էր Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առեւտրաշրջանառությանը եւ հղում անելով Հայաստանի վիճակագրության վարչությանը, գրել էր, որ երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառությունը 2026 թվականի հունվարից մինչեւ մայիս, համեմատած 2025 թվականի նույն ժամանակահատվածի հետ, նվազել է 21.5%-ով: Այս տարվա առաջին հինգ ամիսների վիճակագրության համաձայն՝ երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը կազմել է 2.196 միլիարդ դոլար, մինչդեռ 2025 թվականի հունվար-մայիսին այն կազմել է 2.763 միլիարդ դոլար: Միեւնույն ժամանակ, Ռուսաստանի բաժինը ընդհանուր առեւտրաշրջանառության մեջ նույնպես նվազել է. 2026 թվականի հունվար-մայիսին այն կազմել է ընդհանուրի 28%-ը, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել է 35.1%: Առաջին 5 ամիսների ընթացքում ապրանքաշրջանառությունը նվազել է մոտ կես միլիարդ դոլարով, եւ դա՝ այն դեպքում, երբ առեւտրային սահմանափակումները սկսել են գործել մայիս-հունիս ամիսներին, եթե դրանք պահպանվեն, տարեկան տվյալներն անհամեմատ ավելի վատ են լինելու:

Ինչի՞ հասավ Ռուսաստանը Հայաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներ կիրառելով, եւ ո՞վ է դրանից ավելի շատ տուժում: Այդ պատժամիջոցները որեւէ տնտեսական կամ ֆիտոսանիտարական հիմք, իհարկե, չունեն, դրանք մաքուր քաղաքական են, Ռուսաստանը պահանջում է, որ Հայաստանը եւ հայ ժողովուրդը որոշեն, թե որ ուղղությամբ են ուզում գնալ՝ ԵՄ, թե՝ ԵԱՏՄ: 2026 թվականի հունիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները, մեծ հաշվով, այդ հանրաքվեն էին՝ մի կողմում գործող իշխանությունն էր, որը քարոզում էր Հայաստանի ԵՄ անդամակցության օգտին, մյուս կողմում՝ ընդդիմադիր հիմնական երեք ուժերը՝ «Ուժեղ Հայաստանը», «Հայաստան» դաշինքը եւ «Բարգավաճ Հայաստանը», որոնք հանդես էին գալիս ԵԱՏՄ-ում մնալու եւ Ռուսաստանի հետ գործընկերային հարաբերությունները պահպանելու օգտին: Հայ հասարակության մեծամասնությունը քվեարկեց հօգուտ ընդդիմադիր այս երեք կուսակցությունների, սակայն իշխանությունն աղավաղեց ընտրությունների արդյունքները՝ նկարելով իր համար ցանկալի արդյունք: Ձայնագողությունը, իսկ դրա արդյունք մանդատագողությունը տեսանելի էին նաեւ Ռուսաստանի համար, պաշտոնական արդյունքը Հայաստանի եւ նրա հասարակության ընտրությունը չէր:

Հիմա Ռուսաստանը՝ ինքը, պետք է ընտրություն անի՝ շարունակե՞լ պատժամիջոցային քաղաքականությունը, թե՞ հրաժարվել դրանից՝ հայտարարելով, որ իր համար Հայաստանի ընտրությունը պարզ է: Եթե Ռուսաստանը շարունակում է պատժամիջոցների քաղաքականությունը, դրանից տուժում են շարքային հայ մարդիկ, հարյուր հազարավոր գյուղացիներ, ֆերմերներ, վարորդներ, գործարարներ, ովքեր իրենց վերաբերմունքն ունեն ՀՀ իշխանությունների կողմից վարվող քաղաքականության նկատմամբ, բայց ազդել այդ քաղաքականության վրա, փոխել այդ քաղաքականությունը՝ չեն կարող: Բոլորն են, չէ՞, ասում, որ Հայաստանում հաստատված է բռնապետություն, իսկ բռնապետության ամենակարեւոր հատկանիշն այն է, որ դրանում հասարակական կարծիքը որեւէ ազդեցություն չունի, կարեւորը բռնապետի քմահաճույքն է, որը բռնությամբ պարտադրվում է հասարակության մյուս անդամներին: Պատժամիջոցների շարունակումը Հայաստանը եւ հայ ժողովրդին օտարացնում են Ռուսաստանից, իսկ դրանից Ռուսաստանը հաստատ չի շահում:

Ի՞նչ է շահում Ռուսաստանը՝ չեղարկելով պատժամիջոցները. Նախ՝ ցույց է տալիս, որ ինքն իսկապես Հայաստանը եւ հայ ժողովրդին համարում է բարեկամ, Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսական հարաբերությունները շարունակում են արձանագրել բարձր ցուցանիշներ, երկու երկրների փոխկապակցվածությունը մնում է բարձր մակարդակի վրա: Ճիշտ է՝ Հայաստանի իշխանությունը շարունակելու է, այսպես կոչված, եվրոպական ինտեգրման քաղաքականությունը, ինչն իրական կյանքում դրսեւորվում է ադրբեջանական ինտեգրմամբ, բայց Հայաստանի եւ հատկապես հայ մարդկանց դեմ պատժամիջոցներ կիրառելով դրա դեմը չես առնի, ընդհակառակը՝ կարագացնես: Այնպես որ, Մարիա Զախարովայի՝ առ Հայաստան սիրո խոստովանությունը պետք է գործնական դրսեւորումներ ստանա:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՄԵՆՔ ԵՐԿԱԹԸ ՍԱՌՆ ԵՆՔ ՄԵԾՈՒՄ

Այո, մենք մարդկության հենց այն տեսակին ենք պատկանում, որ երկաթը ծեծում ենք մի լավ սառեցնելուց հետո: Հանում ենք քուրայից, թողնում ենք, որ սառչի, եւ սկսում ենք ծեծել: Մեզ մոտ դա լավ է ստացվում: Իսկ թե երկաթի հետ ինչ է կատարվում, դա արդեն երկաթի պրոբլեմն է: Մենք հոգնում ենք, կաշվից դուրս գալիս, իսկ այդ անզգամը ո՛չ նալ է դառնում, ո՛չ բանալի, ո՛չ գերանդու շեղբ... Նիկոլին քանի՞ անգամ կարելի էր տաք-տաք ծեծել ու մարդ դարձնել: Չէ, ախպեր... Տարանք բերդ, հետ բերինք, նորից տարանք ու հետ բերինք: 18 թվին մտավ ռադիոտուն... Ո՞վ բռնեց նրան, որ մի բան էլ տաք-տաք ծեծեինք: 20 թվի նոյեմբերին փախավ բունկեր: Բունկերը շրջափակեինք, տաք-տաք «ծեծեինք», ինչո՞ւ չարեցինք: Բունկերից հանեցինք, բերինք ԱԺ, որտեղ նա սառեց ու սկսեց խոստումներ տալ, թե հեսա պատերազմի բոլոր հետեւանքները վերացնելու եմ, 6 ամիս տվեք ինձ:

21 թվի փետրվարին էլ կարելի էր «ծեծել» Նիկոլին, երբ ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբը նրան հայտարարեց երկրի անվտանգության թիվ 1 սպառնալիք: Կատաղած դուրս եկավ կառավարության շենքից, կանչեց իր լնգուլվազին, հակացույց արեց... Զմեռ էր: Մենք էլ սպասեցինք՝ քամին մի լավ հովացնի նրան, որ հետո ծեծենք: Բան չստացվեց: Հասանք 21թ. ընտրություններ, իսկ ընտրական խարդախություններում, բոլորին է հայտնի, նա իր հավասարը չունի: Կարո՞ղ էր Նիկոլից բացի մեկ ուրիշը, կապիտուլյացիայի տարին չլրացած, այնպիսի խոստումներ տալ ժողովրդին, որ ժողովուրդը գնար ու զանգվածաբար (680 հազար) ձայն տար Հայաստանի նորանկախ հանրապետությանն առաջին անգամ պարտության տարած պատուհասին: Նոնսենս էր, բայց դա էր իրողությունը: Ու փոխանակ այդ պարտված անփառունակին վռնդեինք, գնացինք ՍԴ՝ բողոքելու: Խնդիրը սառեցրինք՝ մինչեւ նոր շարժում, նոր բան, էս Նիկոլն սկսեց մեկը մեկի հետեւից էլ տարածքներ տալ, Արցախ հանձնել, Արցախ ու ցեղասպանություն ուրանալ, եկեղեցի քանդել: Թույլ տվեցինք 5 տարի այսպես իշխել, սառել, պնդանալ, կարծրանալ...

26-ին հավաքվեցինք իրար գլխի, խորհուրդ արինք եւ որոշեցինք համատեղ ուժերով հեռացնել ազգակործան պատուհասին: Բայց ինքն էլ խեղճ չմնաց... Հավարը դրեց Թրամփին, Մակրոնին, Եվրամիության կանանց, ինչու ոչ՝ Էրդողանին, Ալիեւին՝ հասեք, որ հասեք, ինձ թախտից գցում են: Ու, քանի որ հենց ինքն էր աշխարհի մեծամեծների սրտի վարչապետը, սրանք փողերը տվեցին, կանաչ լույսն էլ վառեցին, թե՝ Նիկոլ ջան, դու պրոբլեմ չունես, ոնց ուզում ես, այնպես էլ վարվիր քո ընդդիմության հետ: Արդյունքում ունեցանք ոչ թե ԱԺ ընտրություններ, այլ էշի հարսանիք: Դե մի ընտրություն, որ Նիկոլն ու իր օգնական Վահագնը կազմակերպեն, ի՞նչ պիտի լիներ: Ամբողջ քարոզարշավի ընթացքում էլ կապիկություն չմնաց, որ չանեին, էլ հայհոյանք չմնաց, որ չտային, հոխորտացին, սպառնացին, վերջում էլ՝ մեռնեմ թվանկարչությանը, 725 հազար ձայն նկարեցին ՔՊ-ի օգտին: Չլիներ ընտրության գնացած ժողովուրդը, գուցե 90 տոկոս էլ խփեին, բայց ստիպված եղան բավարարվել 49 տոկոսով:

Իրավիճակը նորից շիկացավ: Եղավ մի պահ, որ կարելի էր Վահագն Հովակիմյանի թեւից բռնել եւ դուրս շպրտել ԿԸՀ-ից, ստիպել, որ չեղարկեն տեղի ունեցած խայտառակությունը: Խորհրդարան անցած ԲՀԿ-ին ամենալպիրշ ձեւով դուրս էին թողել «մրցույթից», անճշտությունները մի քանի ընտրությունների կբավականացնեին, զորքն էլ առանց ժամուպատարագի քվեարկել էր որտեղ պատահի, ինչքան պատահի... Եվ այս ամբողջ «թոզուդումանը», փոխանակ ավելի տաքացնեինք, թողեցինք այդպես ու գնացինք ՍԴ, թե վիճարկում ենք... Վիճարկեցինք... ՍԴ դատավորները գլուխները թափ տվեցին, զարմացած հայացքներ գցեցին իշխանությունների կողմը, անգամ քմծիծաղ տվեցին Վահագն Հովակիմյանի կցկտուր պատասխանների վրա, բայց վերջում որոշեցին, որ Վահագը ճիշտ է, ԲՀԿ-ն ու մյուսները սխալվեցին: Ընդդիմությանը ոնց որ սառը ջուր տային... Ամեն ինչ նորից թաղվեց անորոշ սպասումի ու հապաղումի մեջ: Այդ ընթացքում Նիկոլն էլ հասցրեց սառել ու «սառը ուղեղով» գրոհել ընդդիմության վրա: Գագիկ Ծառուկյանին բռնել տվեց, սկսեց սպառնալ մյուսներին՝ դուք եկեք խորհրդարան, տեսեք՝ գլուխներդ ինչ եմ բերելու... Չի հանգստանալու, մինչեւ մի քանի մանդատ չպոկի ընդդիմությունից ու 50+1 առավելություն չստանա խորհրդարանում:

Հիմա էլ գնացել է արձակուրդ: Լսվածբան է, որ ընտրակեղծարարը բանտի փոխարեն գնա արձակուրդ: Բայց արձակուրդ կգնա՞ր, եթե Երեւանի փողոցները հեղեղված լինեին մարդկանցով, եթե իրավիճակը սառելու փոխարեն ավելի շիկանար: Ավաղ... Ընդդիմության հետագա քննարկումները շարունակվեցին մանդատ վերցնել-չվերցնելու, խորհրդարան գնալ-չգնալու հարցերի շուրջ, ու կարծես որոշեցին իրավիճակը հանդարտեցնել, թողնել, որ Նիկոլը մի քիչ էլ սառի, որ սառը-սառը ծեծեն:

Տեսնենք՝ ինչ կլինի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԻՐԱՆ

ԼՐՏԵՍԱԿԱՆ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՁԱԽՈՂՎԱԾ ՊԼԱՆ ԻՐԱՆՈՒՄ

Ի քանի տարի առաջ Իսրայելն Իրանում իրականացրել է գաղտնի գործողություն՝ երկրի նախկին նախագահ Մահմուդ Ահմադինեջադին հավաքագրելու համար, որպեսզի հետագայում նպաստի, որ նա գա իշխանության: Սակայն այդ գործողությունը ձախողվել է: Այս մասին բացահայտումը կարդում ենք The New York Times-ում հրապարակված վերլուծական հոդվածում: Համաձայն դրա, ամերիկա-իսրայելական տանդեմի՝ Իրանի դեմ պատերազմի առաջին օրերին իսրայելական «Մոսադ» հատուկ ծառայությունը փորձել է Ահմադինեջադին դուրս բերել Թեհրանից անվտանգ վայր, սակայն պլանը ձախողվել է: Նախկին նախագահը գտնվել է տնային կալանքում՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի հատուկ ծառայությունների կողմից:

Հոդվածում ասվում է, որ իսրայելական հատուկ ծառայությունները Ահմադինեջադի հետ կապ են հաստատել դեռ 2023 թվականին՝ Գվատեմալա նրա այցելության ժամանակ: 24 թվականին նախկին նախագահին այցելել է Բուդապեշտ՝ Լյուդովիկոսի անվան պետական ծառայության համալսարանի կողմից, որտեղ էլ հանդիպել է «Մոսադի» այն ժամանակվա ղեկավար Դավիթ Բարնեայի հետ: Իսրայելական կողմն իր հերթին Ահմադինեջադի հետ շփումների մասին տեղեկացրել է ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությանը: Համալսարանի ռեկտոր Գերգեյ Դելին պարբերականի հետ զրույցում խոստովանել է, որ կոնֆերանսը կազմակերպվել է որպես գաղտնի բանակցությունների քողարկում, իսկ այն, որ Ահմադինեջադը պետք է անպայման հրավիրվեր, իրեն փոխանցվել է հունգարացի բարձրաստիճան պաշտոնյայի կողմից, որի անունը հայտնել չի կարող:

2025 թվականին Ահմադինեջադը երկրորդ անգամ է այցելել Բուդապեշտ եւ, ըստ ԻՀՊԿ հատուկ ծառայությունների տվյալների, երկու անգամ առնվազն կարողացել է թաքուն դուրս գալ շենքից եւ իր անվտանգությունից խուսափելով՝ երկարատեւ գաղտնի հանդիպումներ ունենալ: Անվտանգության աշխատակիցները պատմել են իրանական հատուկ մարմիններին, որ Ահմադինեջադն ասել է, թե համալսարանական պրոֆեսորների հետ հանդիպման է եղել, դրա համար է գաղտնի հեռացել կեցավայրից: 26 թվականի փետրվարի 28-ին իսրայելական «Մոսադի» գործակալները կարողացել են Թեհրանի իր կեցավայրից դուրս բերել Ահմադինեջադին եւ տանել հանդիպման: Սակայն նա հիասթափվել է իսրայելական կողմի՝ իր իշխանության գալու մասին առաջարկից եւ վերադարձել է կեցավայր: Թե ինչպես է կարողացել Ահմադինեջադը դուրս գալ գաղտնի հանդիպման վայրից եւ վերադառնալ իր կեցավայր, հայտնի չէ: Սակայն այդ ժամանակներից մինչեւ հուլիսի 6-ը նա հասարակության մեջ չի երեւացել: Նրան տեսել են հուլիսի 6-ին՝ այաթոլա Ալի Խամենեիի հուղարկավորության ժամանակ, ամենայն հավանականությամբ՝ թիկնապահներով շրջապատված: Թե ինչ կարգավիճակում է նա, հայտնի չէ: Պարբերականը կարողացել է պարզել միայն, որ ներկայում իրանական հետախուզության մոտ է, գտնվում է տնային կալանքի մեջ:

Հիշեցնենք, որ Ահմադինեջադն Իրանի նախագահն է եղել 2005-13 թվականներին: Հայտնի է որպես ամենաարմատական քաղաքական գործիչներից մեկը: Նրա օրոք է Իրանը վերականգնել ուրանի հարստացման ծրագիրը: Նա նաեւ ակնհայտ թշնամական վերաբերմունք է ունեցել Իսրայելի նկատմամբ, ասել է, որ պետք է այն ջնջել աշխարհի քարտեզից, չի ընդունել Հոլոքոստը, համարել է, որ իսրայելական իշխանություններն են կոռուպցիայի կնքահայրերը: Իշխանությունից հեռանալուց հետո գրեթե արմատապես փոխել է դիրքորոշումը շատ հարցերի նկատմամբ: Փորձել է նորից առաջադրվել որպես նախագահ, սակայն դա նրան արգելվել է երեք անգամ՝ 2017, 2021, 2024 թթ., եւ նա հայտարարել է, որ գործող համակարգի պայմաններում չի կարողանա գալ իշխանության: Համարել է, որ ինքը բարեփոխիչ է, նույնիսկ պատրաստ է եղել ճանաչել Իսրայելը, եթե գա իշխանության, եւ հենց դա էլ օգտագործել են իսրայելական հատուկ ծառայությունները:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՃՆՇՈՒՄԸ ՄԵԾԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՌԴ-Ն ԴԱԴԱՐԵՑՆԻ ԱԳՐԵՍԻԱՆ

Հարցազրույց Ուկրաինայի նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ազգային ինստիտուտի փոխտնօրեն, արտաքին հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Մաքսիմ Պալամարչուկի** հետ:

- Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմն այս փուլում նշանավորվում է երկու երկրների մայրաքաղաքների վրա երկուստեք ինտենսիվ գրոհներով: Ինչպիսի՞ն է այժմ դրությունը Կիեւում:

- Կիեւում իրավիճակը հիմնականում կայուն է: Վերջին շաբաթվա ընթացքում հակառակորդը հարվածներ է հասցրել հիմնականում բալիստիկ հրթիռներով, սակայն համեմատաբար փոքր քանակությամբ:

- Ուկրաինան շարունակում է զգալ ՀՕՊ համակարգերի (օրինակ՝ Patriot-ի) համար զինամթերքի պակասը. այդ մասին նախագահ Զելենսկին բազմիցս նշել է, նաեւ բարձրաձայնել արեւմտյան գործընկերների կողմից մատակարարումների անհապաղ անհրաժեշտությունը: Ի՞նչ է արվում այդ ուղղությամբ, օրինակ՝ եվրոպացի գործընկերների միջոցով:

- Բալիստիկ հրթիռներից պաշտպանության ամրապնդման հարցում իրավիճակը բարդանում է եվրոպացի գործընկերների շրջանում հատկապես այս հատվածում ռեսուրսների պակասի պատճառով: Այնուամենայնիվ, Գերմանիան օգնում է բանակցություններին եւ տեղայնացնում է ամերիկյան Petrot հակաբալիստիկ հրթիռների արտադրությունը (Ուկրաինայում եւ Եվրոպայում), մինչդեռ Ֆրանսիան լիցենզավորում է իր հակաբալիստիկ հրթիռների արտադրությունն Ուկրաինայում եւ առաջնահերթություն է տալիս համապատասխան տեղական արտադրության հրթիռների մատակարարմանը:

- Նկատելի է, որ Ուկրաինան զգալիորեն ընդլայնել է Ռուսաստանի տարածքի խորքին հարվածելու իր հնարավորությունները, հարձակումներ նավթավերամշակման գործարաններների վրա եւ այլն: Այսինքն՝ մարտավարություն, որը Զելենսկին է նախանշել՝ Ռուսաստանին ճնշելու եւ Կիեւի համար նախընտրելի դիրք ստանալու նպատակով: Այդպե՞ս է:

- Իսկապես, Ուկրաինան մեծացրել է Ռուսաստանի վրա ճնշումը՝ ագրեսիան դադարեցնելու համար: Ռազմական գործողությունների շարունակականությունը ռազմավարական փոփոխություններ չի բերի, այն միայն կավելացնի զոհերի թիվը եւ թույլտվությունները: Ամեն դեպքում, Ուկրաինայի հարվածները կնվազեցնեն Ռուսաստանի ռեսուրսները՝ հակամարտությունը շարունակելու համար:

Արա ԱԼՈՅԱՆ

Թմրանյութի վրա բռնված ադրբեջանցուն ՀՀ դատարանը ներողամտորեն բաց է թողել

Ազգությամբ ադրբեջանցի, ՌԴ քաղաքացի Վագիֆ Էմիզարի Գուսեինովի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով («Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի, որը կատարվել է խոշոր չափերով») հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, նա, չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու, այսինքն՝ թմրամիջոց պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու թույլտվություն, քննությամբ դեռեւս ինքնությունը չպարզված անձից իր անձնական օգտագործման համար ձեռք է բերել եւ ապօրինի պահել է խոշոր չափերի՝ 0, 335 գրամ քաշով «a-PVP» կրճատ անվամբ տեսակի թմրամիջոց: Թմրանյութը հայտնաբերվել է 2026 թ. ապրիլի 5-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կենտրոնական բաժնում կատարված վերջինիս անձնական խուզարկությամբ:

Ադրբեջանցի Վագիֆ Գուսեինովը ծնվել է 1992-ին, Վրաստանի Հանրապետությունում, միջնակարգ կրթություն ունի, նախկինում դատված չի եղել, ՀՀ-ում չի աշխատել, ՀՀ-ում հաշվառում չունի, բնակվել է Երեւանի Մամիկոնյանց փողոցում: Նախնական դատալսումների ընթացքում նա ներկայացրել է արագացված վարույթ կիրառելու մասին միջնորդություն՝ հայտնելով, որ իրեն պարզ է ներկայացված մեղադրանքը, ամբողջությամբ համաձայն է ներկայացված մեղադրանքի հետ, մինչեւ միջնորդությունը ներկայացնելը խորհրդակցել է իր պաշտպանի հետ, գիտակցում է արագացված վարույթ կիրառելու հետեւանքները եւ այլն: Հանրային մեղադրող Վ. Մովսիսյանը չի առարկել արագացված վարույթ կիրառելու դեմ:

2026թ. հունիսի 2-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Գ. Պողոսյանը վճռել է Վագիֆ Գուսեինովին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 19-ապատիկի՝ 1 միլիոն 425 հազար ՀՀ դրամի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 79-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով հաշվի առնելով Վ. Գուսեինովի 1 ամիս 27 օր ժամանակով փաստացի անազատության մեջ գտնվելու ժամկետը՝ նրան ազատել նաեւ իր նկատմամբ տուգանքի ձեւով նշանակված պատիժը կրելուց: Վագիֆ Գուսեինովի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոխել եւ որպես այլընտրանքային խափանման միջոց՝ կիրառել բացակայելու արգելքը, որը թողնել անփոփոխ, մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ վճռի դեմ մեղադրող Վ. Մովսիսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով մասնակի բեկանել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2026թ. հունիսի 2-ին կայացրած դատավճիռը, Վ. Գուսեինովի նկատմամբ նշանակել պատիժ ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության համար, վերջինիս նկատմամբ նշանակել պատիժ՝ 1 տարի ժամկետով ազատազրկում: Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ քրեական վերաքննիչ դատարանում սույն գործով հուլիսի 13-ին նիստ է կայացել, հաջորդ նիստը նշանակված է հուլիսի 22-ին:

Դե, ազգությամբ ադրբեջանցի թմրանյութ օգտագործողը հո հայ ընդդիմադիր չէ՞, որ դատարանն ամիսներով նրան կալանքի տակ պահեր եւ վերջում խիստ պատիժ նշանակեր: Դատարանն առաջնորդվել է ՀՀ իշխանությունների՝ ադրբեջանցիների հանդեպ սիրո եւ հանդուրժողականության զգացումներով եւ մեղմ պատիժ է սահմանել, ավելի ճիշտ՝ ազատել է պատժից:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

2024 թվականից նախարարությունը տապալում է մրցույթները

ԿԳՄՍՆ-ն մի քանի տարի է՝ հետեւողականորեն տապալում է Գեղարքունիքի մարզի «Սեւանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթը: 2024 թվականին քոլեջի նախկին տնօրեն Գեղամ Խաչատրյանին ազատել են աշխատանքից՝ տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնելով Հասմիկ Մաթեւոսյանի վրա:

Մարզում եւ քոլեջում վստահ են, որ ԿԳՄՍ նախարարության կողմից միտումնավոր են տապալվում Սեւանի քոլեջի տնօրենի ընտրության փորձերը, եւ դա շարունակելու են այնքան ժամանակ, քանի դեռ նախարարությունն իր սրտի տնօրենի թեկնածուին չի գտել: Նշենք, որ նախկին տնօրեն Գեղամ Խաչատրյանի թեկնածությանը նախարարությունում դեմ են, քանի որ նա ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանի քրոջ ամուսինն է:

Ըստ մեզ հասած լուրերի՝ ուզում էին տնօրեն կարգել Վարդան Պետրոսյանին, որը երկար տարիներ աշխատում է քոլեջում: Վ. Պետրոսյանը տնօրենի մրցույթին մասնակցելու համար հավաստագիր է ստացել 2025 թվականի ապրիլին, իսկ մինչ այդ հայտարարված մրցույթները չէին կայանում: Հետաքրքիրն այն է, որ այս պարագայում, երբ ՔՊ-ին սատարող Պետրոսյանը ստացել է հավաստագիր, ԿԳՄՍՆ-ն կրկին տապալում է մրցույթները: Տնօրենի թափուր հաստիքի համար օգոստոսի 4-ին նախարարության կողմից կրկին մրցույթ է հայտարարված:

Քոլեջի նախկին տնօրեն **Գեղամ Խաչատրյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ այս անգամ եւս մասնակցելու է մրցույթին, սակայն հույս չունի, որ մրցույթը կկայանա. «Այս ընթացքում ԿԳՄՍՆ-ի կողմից լիազոր մարմնի ներկայացուցչի չգալու պատճառով մի քանի մրցույթ չի կայացել: Ոչ մի պատճառաբանություն ԿԳՄՍՆ-ն չի տալիս: Ամեն անգամ խորհուրդը գրությունը գրումուղարկում է, որ լիազոր մարմնի ներկայացուցիչ ապահովեք, բայց ոչ մի արձագանք»:

Գեղարքունիքի մարզի «Սեւանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթը չի կայանում նախարարության կողմից ներկայացուցչի բացակայության պատճառով, ինչո՞ւ նախարարությունը ներկայացուցիչ չի ուղարկում. հարցն ուղղեցինք ԿԳՄՍ նախարարությանը: «Հարցը գրավոր ուղարկեք»,- եղավ ստանդարտ պատասխանը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՆՉՊԵ՞Ս Է ՍՏԱՑՎՈՒՄ, ՈՐ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՎՐՈՊԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆ ԱՐՑԱԽ ԵՎ ՉԵՆ ՏԵՍՆՈՒՄ ԴԱ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Դրապարակի» զրուցակիցն Արցախի մշակույթի նախկին նախարար **Նարինե Աղբալյանն** է:

- Ադրբեջանցիներն այն աստիճան բարբարոսաբար են վերաբերվում Արցախում հայկական մշակույթի արժեքներին, որ անգամ օտարերկրացի բլոգերներն են անդրադառնում դրան՝ նշելով, որ տարբեր օկուպացված տարածքներում են եղել, սակայն նման բարբարոսություն, մշակութային արժեքների նկատմամբ անթաքույց ատելություն ու ագրեսիա երբեւիցե չեն տեսել: Ըստ Ձեզ՝ ո՞րն է ազերիների այդ վերաբերմունքի պատճառը: Իշխանությունները շատ են սիրում խոսել խաղաղության մասին: Նման խաղաղություն լինո՞ւմ է:

- Պարզ է, որ նրանց վայրագությունների պատճառը հիմնականում հայկական հետքը վերացնելն է: Այդ ծրագիրը նրանք վաղուց էին փորձում իրականացնել, իսկ այժմ, երբ հայկական Արցախն իրենց տիրապետության տակ է, բնական է, որ պետք է այդպես վարվեին: Ինչ վերաբերում է խաղաղություն հաստատելուն, ապա եթե այդ խաղաղության գինը պետք է լինի հայկական ինքնության, պետության եւ, առհասարակ, հայ ժողովրդի կորուստը, ապա դա խաղաղություն չէ, դա բնաջնջում է: Եթե մենք մեր հայրենիքն ենք կորցրել, եթե մենք ամեն օր կորցնում ենք մեր մշակութային ժառանգությունը, եթե ամեն օր Ադրբեջանը վերացնում է հայկական հետքը եւ ստիպում է մեզ մոռանալ մեր արմատները, ապա ի՞նչ խաղաղության մասին կարող է խոսք լինել:

- 90-ականների պատերազմից հետո որոշ շրջանակներ ադրբեջանական փաստաբանների դերն են ստանձնել ու հայտարարում են, որ հայերը նույնպես համարժեք քայլեր են արել՝ ավերել են ադրբեջանական ժառանգությունը: Որ մենք էլ ենք բարբարոսություններ արել եւ այլն: Բայց կուզեի նախ հասկանայինք՝ ի՞նչ ադրբեջանական ժառանգություն է եղել Արցախում, եւ, առհասարակ, հայերը երբեւիցե նման բարբարոսություններով աչքի ընկե՞լ են:

- Ընդամենը մեկ օրինակ բերեմ, ու երեւի միայն դա բավարար է, որպեսզի հերքենք աշխարհին պարտադրված այդ սուտը: Շուշիում վերջին տարիներին՝ հայաթափումից առաջ վերականգնվեց Շուշիի մզկիթը: Միայն այս մեկ օրինակը փաստում է այն մասին, որ հայերը ոչ միայն նրանց մշակույթը չեն վերացրել, այլեւ դեռ մի բան էլ հարկ եղած դեպքում վերականգնել են նրանց մշակութային ժառանգությունը: Ամեն օր միջազգային հանրությանը նման ստեր են հրամցնում եւ հարկադրում են հավատալ դրան: Ամենավատը դա է: Բայց մենք տեսնում ենք, որ անգամ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցին են ավերել: Ադրբեջանցիները կոնկրետ երկու ճանապարհով փորձում են հայկական հետքը վերացնել. կամ ոչնչացնել ամբողջովին հայկական մշակույթը, կամ փոխել ծագումը: Ամեն մի թիզ հողն Արցախում այնքան հայկական է, եւ ամենացավալին այն է, որ մենք հստակ չգիտենք, թե կոնկրետ քանի հայկական եկեղեցի է վերացվել այս ընթացքում, մենք միայն տեսնում ենք այն, ինչ ասվում է: Զարմանում եմ, թե ինչպես է ստացվում, որ քաղաքակիրթ Եվրոպայի ներկայացուցիչները գնում են Արցախ եւ չեն տեսնում այն, ինչը տեսնում ենք մենք՝ բոլորս: Ապշում եմ՝ ինչպե՞ս են այդքան հաշտ այս իրողությունների հետ, ոչ միայն հաշտ, այլեւ բարեկամություն են անում վանդալիզմի հեղինակի հետ:

- Հայաստանի իշխանություններն այս առումով ունե՞ն անելիք:

- Հայաստանի իշխանությունները հենց առաջինը պետք է այդ մասին բարձրաձայնեին: Հենց նրանք պետք է մտահոգվեին արցախյան մշակութային ժառանգությունների ոչնչացումով, բայց, ցավոք, նրանք ոչ միայն մտահոգ չեն, այլեւ՝ աչք են փակում, կոծկում են ամեն բան՝ թվացյալ խաղաղության քողի տակ: Եթե Հայաստանի իշխանություններն անտարբեր են այս հարցում, ապա մենք որեւէ այլ պետությունից չենք կարող ակնկալիք ունենալ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԱՌ ԿԵՐՊԱՐՆԵՐ, ԸՆԴԳԾՎԱԾ ԷՄՈՑԻԱՆԵՐ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՄԱՅՔ

Համաշխարհային կինոարվեստի մասին խոսելիս հնարավոր չէ շրջանցել թերեւս ամենագունեղ, վառ կերպարներով լի, ընդգծված էմոցիոնալ, ազգային մշակույթի դետալներով հարուստ ազգային կինոներից մեկը՝ հնդկական կինոարվեստը: Եթե ամերիկյան կինոյի դեպքում ասում են հոլիվուդյան կինո, ապա հնդկական կինոյի դեպքում ասում են՝ Բոլիվուդյան կինո:

Իրականում, ողջ հնդկական կինոն չէ, որ կապված է Բոլիվուդի հետ, եւ սա զուտ խորհրդանշական իմաստով է ասվում: Իր ավելի քան մեկդարյա գոյության ընթացքում Բոլիվուդը փոքր ռեգիոնալ կինոարդյունաբերությունից վերածվել է կարեւորագույն համաշխարհային մշակութային ֆենոմեններից մեկի, որը միլիարդավոր մարդկանց վրա է ազդեցություն ունենում, նրանց, ովքեր ապրում են նաեւ Հնդկաստանից շատ հեռու: Բոլիվուդի պատմությունն արվեստի, տնտեսության, քաղաքականության, կրոնի եւ ազգային ինքնության պատմություն է: Այն արտահայտում է ողջ Հնդկաստանի անկախացման պատմությունը, նաեւ ավելի վաղ՝ ներառյալ մի հատված, երբ անգլիական գաղութատիրության տակ էր Հնդկաստանը:

Կինոարվեստը Հնդկաստան է մուտք գործել Եվրոպայում ստեղծվելուց գրեթե անմիջապես հետո: 1896 թվականի հուլիսին Լումյեր եղբայրների կողմից կինոյի ստեղծումից հետո առաջին կինոդիտումներն են իրականացվել Բոմբեյում: Նոր արվեստը մեծ հետաքրքրություն է առաջացնում տեղի ձեռներեցների եւ հասարակության մեջ: Առաջին մարդը, որ կարողացել է կինոն ազգային արվեստի ճյուղ դարձնել, համարվում է Դասասեհաբ Փալխքեն: 1913 թվականին նա նկարահանում է «Ռաջա Խարիշչանդան» կինոնկարը, որը համարվում է հնդկական առաջին լիամետրաժ կինոնկարը: Սյուժեի հիմքում հին հնդկական առասպելն է ու հնդուիստական միֆոլոգիան: Եվ այս ընտրությամբ էլ կանխորոշվում է հետագա տասնամյակներին հնդկական ազգային կինոյի զարգացման ուղղությունը: Ի տարբերություն եվրոպական կինոյի, հնդկական կինոյում հենց սկզբից փորձել են համատեղել դիտարժանությունը, բարոյական խրատներն ու կրոնական ավանդույթները: «Բոլիվուդ» եզրույթը ձեւավորվել է շատ ավելի ուշ՝ 1970-ական թվականներին: Այն ձեւավորվել է «Բոմբեյ» եւ «Հոլիվուդ» բառերի միաձուլումից: Չնայած այս եզրույթն այդքան լայն տարածում է գտել, շատ հնդիկ ռեժիսորներ այս անվանմանը քննադատաբար են վերաբերվում: Բոմբեյը՝ ներկայիս Մումբայը, դառնում է հնդկական կինոարվեստի գլխավոր կենտրոնը, որտեղ կինոնկարները նկարահանվում են հինդի լեզվով: Արդեն 1930-ական թվականներին Բոլիվուդը տարեկան թողարկում էր մի քանի հարյուր կինոնկար՝ համեմված ազգային երաժշտությամբ, կրոնական ավանդույթներով, միֆոլոգիայով եւ դիտարժանությամբ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՆՈՐՄԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՔԵՐԹ

Եվրամիության խորհուրդը հայտարարել է Ընդհանուր անվտանգության եւ պաշտպանության քաղաքականության (CSDP) շրջանակներում Հայաստանում ԵՄ գործընկերային առաքելության (EUPM Armenia) մեկնարկի մասին: Խորհրդատվական քաղաքացիական առաքելության նպատակն է՝ աջակցել Հայաստանի իշխանություններին՝ հիբրիդային սպառնալիքների դեմ երկրի դիմակայունությունը բարձրացնելու եւ անվտանգային նոր մարտահրավերներին արձագանքելու հարցում: Սա՝ պաշտոնապես:

Իրականում, դա Եվրամիության հերթական միջամտությունն է Հայաստանի ներքին գործերին: Թե ինչու է ասվում, որ այժմ է տրվել մեկնարկը՝ անհասկանալի է: Որովհետեւ դրա սկիզբը դրվել էր դեռեւս ապրիլին՝ նախընտրական ժամանակահատվածում: Դրա շրջանակներում Նիկոլենք, որպես գործող իշխանություն, 15 միլիոն եվրոյի դրամաշնորհ էին ստացել՝ իբրեւ թե հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու՝ հայաստանյան ներուժի զարգացման համար: Իրականում, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, վերը նշված բոլոր երեւույթներին, ինչպես նաեւ ապօրինի ֆինանսական հոսքերին դիմակայելու փոխարեն կանքի կոչեցին այդ ամենը, ինչը դրսեւորվեց, նախ, պետական մակարդակով ընտրակաշառք բաժանելու տեսքով: Երկրորդ. ընդդիմադիր ընտրողների հսկայածավալ հետապնդումների, ինչպես նաեւ՝ նրանց հասցեին ամենօրյա կտրվածքով արված սպառնալիքների տեսքով: Նախկինում երբեք չտեսնված ու չլսված զրպարտություններ ու վիրավորանքներ հասցեագրվեցին ընդդիմադիր հայացքներ ունեցող թեկնածուներին եւ ընտրողներին: Այո, հենց նաեւ ընտրողներին, ոչ միայն քաղաքական ուժերին: Նույնիսկ այն աստիճան, որ վերջիններս 100 տոկոսով համարվեցին ընտրակաշառքով քվեարկածներ: Այդ ամենը տեղի ունեցավ Հայաստանում Եվրամիության գրասենյակի, եվրոպական երկրների դեսպանատների աշխատակիցների ու դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության անդամների աչքի առաջ: Իսկ նրանց կողմից չհետեւեց որեւէ լուրջ արձագանք, ինչը հետ կպահեր Նիկոլին այդ վարքագծից:

Դիտարկենք ԵՄ միջամտության առումով երկրորդ կողմը: Հայաստանը դեռեւս շարունակում է մնալ ՀԱՊԿ-ի անդամ: Փաշինյանի կողմից ՀՀ անդամության կասեցումը ֆորմալ առումով առ ոչինչ է, որովհետեւ նման դրույթ առկա չէ կազմակերպության կանոնադրության մեջ: Ի դեպ, ինստիտուցիոնալիզացումն ամեն պատեհ եւ ոչ պատեհ առիթով գովերգող Փաշինյանն այս դեպքում նահանջել է իր սկզբունքներից, ինչը, ի դեպ, նորություն չէ: Դա արվում է միշտ եւ այն ժամանակ, երբ այլ հարմար տարբերակ չի գտնվում: Ինչեւէ, աննորմալություն է միեւնույն անվտանգային համակարգում գտնվող երկրներից հիմնականին մյուսի համար որպես սպառնալիքների աղբյուր դիտարկելը, ինչը մինչ այդ արձանագրվել էր արտաքին հետախուզության ծառայության զեկույցում՝ առանց ՌԴ-ի անունը տալու: Դա էլ՝ ոնց որ նորահարսը սկեսրայրի հետ խոսեր՝ առանց նրան նայելու ու անունը տալու: Կարծում եմ, որ դա էլ արվել էր, որպեսզի ԵՄ-ն եվրոպացիներին հիմնավորեր, թե ինչու է այդքան գումար նվիրում ՀՀ-ում գործող հակաժողովրդավարական իշխանությանը:

Ինչ էր դա, եթե ոչ Հայաստանի ներքին գործերին եվրոպական միջամտության դրսեւորում, ինչը ոչ միայն ընդունելի է համարվում գործող իշխանության կողմից, այլեւ ողջունվում է: Ու այդ պարագայում Նիկոլենք ինքնիշխանության հոգսը քաշելու խնդիր չեն տեսնում: Մի պահ վերացարկվենք ՀԱՊԿ-ի խնդրից, հիշենք, որ ՌԴ-ն դիտարկվում է որպես սպառնալիքների աղբյուր՝ Հայաստանի տարածքում Գյումրու 102-րդ ռուսական ռազմաբազան ու Երեւանի «Էրեբունի» ավիաբազան ունենալու պարագայում: Եվ գործող իշխանությունը չի մտածում դրանցից ազատվելու խնդիրն առաջադրելու մասին: Ինչ է դա, եթե ոչ մեկ այլ աննորմալություն:

Այժմ անդրադառնամ աննորմալության երրորդ դեպքին: Մի քանի ամիս շարունակ ՌԴ ղեկավարությունը Նիկոլին առաջարկում է կողմնորոշվել, թե որ ուղղությունն է վերջապես նախընտրում՝ հյուսիսը, թե՝ արեւմուտքը: Իրեն գժի տեղ դրած (ինքն էր, չէ՞, մի ժամանակ գլուխ գովում, որ իրեն գժի տեղ է դնում)՝ բանի տեղ չէր դնում այդ առաջարկը՝ իր «սիրելի» ժողովրդին ու ռուսներին հիմարի տեղ դնելով, թե դա կանի այն ժամանակ, երբ կգա հարմար պահը: Իսկ երբ եկավ այդ պահը, գլխի ընկավ, որ դա ոչ թե հարմար, այլ շատ անհարմար պահ էր: Ու ընկավ ռուսների ոտքը, թե մեզ մի զրկեք ձեզ գյուղմթերք վաճառելու հնարավորությունից: Ու պարզվեց, որ ոչ թե ռուսներին էր հիմարի տեղ դրել, այլ միայն իր «սիրելի» ժողովրդին, ու իրեն էլ կանգնեցրել անլուծելի խնդրի առաջ: Կարծում եմ, որ աննորմալությունների շղթան ասվածով չի ավարտվում: Բայց դա էլ բավարար է, որպեսզի ուղեղի ծալքեր ու դրանում գորշ նյութի որոշակի ծավալ ունեցող՝ ՔՊ ընտրող յուրաքանչյուր անձ հասկանա, թե ում է ձայն տվել հունիսի 7-ին:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 16.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի անվտանգության մասին շատ է խոսվում, բայց հաճախ այդ խոսակցությունները կորչում են քաղաքական վեճերի մեջ: Մինչդեռ եթե լսենք, թե ինչ են ասում մասնագետները, տնտեսագետները, լրագրողներն ու վերլուծաբանները, կտեսնենք, որ նրանք տարբեր ձեւակերպումներով մատնանշում են մի քանի հիմնական խնդիր՝ պետության անվտանգության եւ պաշտպանունակության ամրապնդում, տնտեսության իրական դիմադրողունակություն (հատկապես արդյունաբերության, գյուղատնտեսության եւ արտաքին առեւտրի ոլորտներում), պետական կառավարման արդյունավետություն ու հասարակության վստահություն պետական ինստիտուտների նկատմամբ:

Խնդիրները նոր չեն, սակայն սուր են, որովհետեւ աշխարհաքաղաքական իրավիճակն արագ փոխվում է, տարածաշրջանում ձեւավորվում են նոր իրողություններ, իսկ Հայաստանի յուրաքանչյուր սխալ կամ ուշացած որոշում կարող է թանկ արժենալ: Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ խաղաղության օրակարգը Հայաստանի անվտանգության հիմնական երաշխիքներից է, շեշտում է տնտեսական աճի եւ պետական բարեփոխումների մասին: Սակայն շատերը, օրինակ, նախկին օմբուդսմեն Արման Թաթոյանը, ռազմական վերլուծաբան Կարեն Հովհաննիսյանը զգուշացնում են, որ խաղաղության մասին հայտարարությունները բավարար չեն, եթե չկան պաշտպանական համակարգ, սահմանային անվտանգություն, պետական ինստիտուտները բնականոն չեն գործում, եւ հասարակության դիմադրունակությունն ընկած է: Կառավարությունը հայտարարում է, որ խաղաղության հաստատումը եւ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորումը երկրի զարգացման գլխավոր նախապայմանն են: Անվտանգության մասնագետները, նախկին զինվորականները իրավացիորեն նկատում են, որ խաղաղությունը ցանկություն չէ, այլ ուժով, հաշվենկատ դիվանագիտությամբ եւ ամուր պետությամբ պաշտպանվող արժեք:

Հայաստանի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները՝ սահմանային լարվածություն, տարածաշրջանում ուժերի վերադասավորում, նոր աշխարհաքաղաքական իրողություններ, ցույց տվեցին, որ նույնիսկ ամենալավ դիվանագիտությունը չի կարող արդյունք տալ, եթե նրա թիկունքում չկա ուժեղ պետություն: Ամենակարեւորը պետական դիմադրունակության հարցն է, եւ խոսքը միայն բանակի մասին չէ: Եթե սահմանամերձ գյուղը դատարկվում է, եթե երիտասարդ ընտանիքը չի տեսնում ապագա, եթե քաղաքացին վստահ չէ պետական ինստիտուտների ուժի վրա, թուլանում է ոչ միայն տնտեսությունը կամ ժողովրդագրության պատկերը, այլեւ՝ ազգային անվտանգությունը:

Իշխանությունները նշում են, որ բանակը վերազինվում է, սպառազինության պայմանագրեր են կնքվում, պաշտպանության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ, իսկ խաղաղության գործընթացը նվազեցնում է պատերազմի վտանգը: Սակայն փորձագետները հիշեցնում են, որ խաղաղությունը չի կարող հիմնվել միայն փոխադարձ հայտարարությունների վրա: Այն պահանջում է ուժեղ պաշտպանություն, վստահելի դաշնակցային ու գործընկերային հարաբերություններ, արդյունավետ պետական կառավարում եւ ազգային համախմբվածություն:

Թվում է՝ հենց այստեղ է ամենամեծ խնդիրը: Տարիներ շարունակ հասարակությունը բաժանվել է քաղաքական ճամբարների, եւ այդ բաժանումը խարխլել է մեր անվտանգությունը, նվազեցրել մեր դիմադրողականությունը: Կառավարության առջեւ կանգնած ամենակարեւոր խնդիրը ոչ միայն խաղաղության բանակցություններն առաջ տանելն է, այլեւ հասարակությանը համոզելը, որ պետությունը պատրաստ է ցանկացած զարգացման: Դրա համար անհրաժեշտ է բաց ու անկեղծ խոսել առկա ռիսկերի մասին, ամրապնդել բանակը, զարգացնել սահմանամերձ բնակավայրերը, բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը եւ ձեւավորել այնպիսի մթնոլորտ, որտեղ քաղաքացին կզգա, որ պետությունը ոչ միայն իրենից պահանջում է, այլեւ իրեն պաշտպանում է: Մի բան, որը, շատերի կարծիքով, բացակայում է այսօր:

Անվտանգությունը, իրոք, հայտարարություններով չի ամրապնդվում: Այն կառուցվում է ամենօրյա, հետեւողական աշխատանքով, պետական մտածողությամբ եւ ազգային միասնականությամբ: Հայաստանի անվտանգությունը մեկ օրվա կամ մեկ կառավարման ժամանակահատվածի խնդիր չէ: Այն շարունակական գործընթաց է, որը պահանջում է ռազմավարական մտածողություն, մասնագիտական ճշգրիտ որոշումներ եւ հասարակության լայն մասնակցություն:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am